№ 150 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 12

1908
ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 12 № 150

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Базарная ул. д. Тамамшева № 16.
կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
(36-րդ ՏԱՐԻ)
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ
Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲԼԻ
Ամսական մէկ րուբլի
Ամերիկա տարեկան . 6 դօլար
Եւրօպա » . . 30 ֆրանկ
Պարսկաստան » . 10 րուբլի
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել . . . . 40 կոպ.

Զանգեզուր
գաւառի Ղափանի շրջանի գիւղական
ՄԻԴԱՍԵԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ
ՑԵՆԶԱՒՈՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Ամսական 35—40 րուբլի ռոճիկով, բնակարան, վառելիք և ծառայ։ Ցանկացողները մանրամասն պայմանների հետ ծանօթանալու համար թող բարեհաճեն դիմել մինչև յուլիսի 20-ը, ներկայացնելով իրանց կրթական ցենզի և ուսուցչական գործունէութեան մասին համառօտ տեղեկութիւններ հետևեալ հասցէով. Баку, К-ра Арамаздъ, А. Вачьянцу.
(տպ. 5, 6, 8, 10, 12 առ.) 5—5

ԱԼԵՔՍԱՆԴՐՕՊՕԼԻ
Արղութեան չորսդասեան օրիորդաց դպրոցի համար
Հարկաւոր է
աւագ-ուսուցիչ բարձրագոյն կամ մանկավարժական կրթութեամբ (ուսուցչական ինստիտուտաւարտ), շաբաթական 14 դաս, տարեկան 1200 ռուբ. ռոճիկով։ Խնդիրները վկայագրերով պէտք է ուղարկել մինչև յուլիսի 15-ը այս հասցէով՝ Александрополь, Приходскому попечительству армянской церкви св. Богородицы.
Ս. Աստուածածնի ծխ. հոգաբարձութիւն
(և. հ.-դ.) ա 10—10

Ա. ՔԱԼԱՆԹԱՐԻ ԱՌԱՆՁԻՆ ԿԱՐԾԻՔԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ*)

«Գ. Անցնում եմ այժմ հայ եկեղեցական-ծխական դպրոցներում երրորդ լրացուցիչ դասարան բանալու իրաւունքի խնդրին։

Այդ դասարանի բացումը հայ եկեղեցական-ծխական դպրոցներում թելադրվել է ինչպէս բարձրագոյն ուկազի ընդհանուր ոգով և 1874 թւի յուլիսի 19-ի կանոնների ներքին իմաստով, այնպէս էլ այն բացատրութեամբ, որ տուել է ներքին գործերի մինիստրութիւնը 1876 թւին հայ եկեղեցական-ծխական ուսումնարանների կրթական առարկաների ծաւալի մասին։

Ինչպէս յայտնի է, այն ժամանակ, երբ հրատարակվեցին կանոնները, ոչ մինիստրական և ոչ ռուսական եկեղեցական-ծխական երկդասեան ուսումնարաններում չէին դասաւանդվում ընդհանուր պատմութիւն և աշխարհագրութիւն, մինչդեռ 1874 թւի յուլիսի 19 կանոնները այդ թոյլ են տալիս լիովին։ Կանոնների բնագրի մէջ կայ բոլորովին ճիշտ ցուցում, որ այն դպրոցներում, «որոնց մէջ դասաւանդվում են ընդհանուր պատմութիւն եւ աշխարհագրութիւն, պէտք է դասաւանդվեն Ռուսաստանի պատմութիւնը եւ աշխարհագրութիւնը, եւ այն՝ ռուսական լեզուով»,

Եթէ կանգ առնելու լինէինք միայն այդ չորս առարկաների վրա, մենք կունենայինք մի ընդարձակ դասընթացք, որը պահանջում է յատուկ դասարաններ և երկարատև զբաղմունքներ։

Պէտք է նկատել, որ բարձրագոյն ուկազը չէ սահմանում դասարանների թիւը։ Իսկ դպրոցական կեանքի իրականութիւնը և 1874 թւի յուլիսի 19-ի կանոնների գործադրութիւնը ցոյց տուեց, որ այդ առարկաների դասաւանդութիւնը պահանջում է նոր դասարաններ։ Մանաւանդ որ երկրորդ դասարանի գոյութիւնը ամենևին չէ փոխում դպրոցի տիպը և դպրոցը մնում է ստորին կարգի դպրոց։ Ստորին կարգի դպրոցի մասին հասկացողութիւնը ամենևին չէ սահմանափակվում երկու դասարաններով։ Դա, բակապէս, պայմանական հասկացողութիւն է, որ կարող է իր մէջ պարփակել և երրորդ դասարանը։ Եւ յայտնի են ստորին կարգի շատ դպրոցներ, որոնց դասընթացքը աւելի փոքր չէ, քան գիմնազիայի երրորդ դասարանինը։ Թիֆլիսի մէջ կայ այգեգործական դըպրոց, որ պատկանում է ստորին կարգի գիւղատնտեսական դպրոցների տիպին, բայց որի մէջ այնուամենայնիւ անցնում են այնպիսի առարկաներ, որոնք հազիւ մատչելի են չորրորդ դասարանեան գիմնազիստի համար։ Ի հարկէ, կարելի է առարկել, թէ այգեգործական դպրոցը մասնագիտական դպրոց է, սակայն խնդիրը դրանից չէ կորցնում իր նշանակութիւնը, որովհետև այնտեղ էլ կայ նոյն կըրթական ելևէջը, ինչ որ յատուկ է ընդհանուր դպրոցներին, այն է կան և միջին և բարձրագոյն գիւղատնտեսական դպրոցներ։ Եւ, յամենայն դէպս, յուսով եմ, որ ոչ ոք չի հաւասարեցնի գիմնազիայի երեք դասարանների փոքրիկ դասընթացը հէնց իր գիմնազիայի դասընթացքի հետ և կը համաձայնի, որ երեք դասարանները տալիս են միայն ստորին կրթութիւն։

Դիմենք այժմ այն փաստերին, որ տալիս են 1874 թւի յուլիսի 19-ի կանոնների վրա ստեղծված հայկական ուսումնարանները։ Ի՞նչ ենք մենք տեսնում այնտեղ։ Մենք տեսնում ենք, որ այդ կանոնների հիման վրա բացված էին դպրոցներ, որտեղ դասաւանդվում էին այնպիսի առարկաներ, ինչպէս են պատմութիւն, աշխարհագրութիւն, բնական պատմութիւն, տարրական հողաչափութիւն և այլն, ընդ որում դասընթացքը շարունակվում էր 7—8 տարի։ Այդպիսի դըպրոցներից յիշատակենք Գայիանեանը Թիֆլիսում, Եղիսաբէթեանը և Կարապետեանը Ախալցխայում, մի ուսումնարան Ալէքսանդրօպօլում և ուրիշներ։ Այդ ուսումնարաններում 7—8 տարուց առաջին երեք տարին յատկացված էին նախապատրաստական դասարանի համար, որ բաղկացած էր երեք բաժանմունքից, իսկ մնացածները կազմում էին հետևեալ դասարանները։

Երրորդ լրացուցիչ դասարանի բացումը անհրաժեշտութիւն է և մանաւանդ նպատակայարմար է այնպիսի խոշոր գիւղերում, ինչպէս են՝ Իգդիրը, Ագուլիսը, Աշտարակը, Մեծ-Ղարաքիլիսան, Ջալալ-Օղլին, Գօրիսը, կամ այնպիսի քաղաքներում, ինչպէս են Հին-Նախիջևանը, Նոր-Բայազէտը, Կաղզւանը, Ախալցխան և նրանց նմանները, որտեղ չը կան ուրիշ դպրոցներ բարձր դասընթացքներով։ Այս դէպքերում երրորդ դասարանը հնարաւորութիւն է տալիս ազգաբնակութեան հայթայթելու իր զաւակներին թէև փոքր, բայց և այնու ամբողջացրած կրթութիւն։

Կան և մի քանի ուրիշ նկատումներ, որոնք արդարացնում են երրորդ դասարանի հաստատութիւնը, բայց ես կը բաւականանամ ասածներովս։

Եւ այդպէս՝ իմ բերած չորս պատճառաբանութիւնները, այն է՝ 1) 1874 թւի յուլիսի 19-ի կանոնների ցուցումը, որ հայ եկեղեցական-ծխական դպրոցներում կարող են անցնել ընդհանուր պատմութիւն և աշխարհագրութիւն, Ռուսաստանի պատմութիւնը և աշխարհագրութիւնը, 2) փաստերը դպրոցական այն իրականութեան, որ ստեղծվեց 1874 թւի կանոնների հիման վրա յանձին Գայիանեան, Եղիսաբէթեան, Կարապետեան և ուրիշ դպրոցների, 3) դասարանների թւի վերաբերութեամբ բացակայութիւնը որևէ սահմանափակման 1874 թւի յուլիսի 19-ի կանոնների մէջ և ուրեմն ծանրակշիռ առարկութիւնների բացակայութիւնը դպրոցի երեք-դասարանական կազմութեան դէմ, որը այնուամենայնիւ պատկանում է դպրոցի ստորին տիպին և ոչ միջնակարգին, և 4) այդպիսի դպրոցների գործնական պահանջը ազգաբնակութեան կեանքի մէջ և նրանց կազմակերպութեան նպատակայարմարութիւնը որոշ կէտերում, այլ և ուրիշ նկատումներ, օրինակ՝ տեղական նախաձեռնութեան զարգացումը և բարերարների կողմից խոշոր միջոցների զոհաբերութեան խրախուսումը, դարձնում են լիովին համոզիչ երրորդ լրացուցիչ դասարանի բացման նպատակայարմարութիւնը և օրինականութիւնը այն բոլոր տեղերում, ուր կայ դրա համար հնարաւորութիւն և թոյլատրում են դրամական միջոցները։

Այս խնդրի հետ միասին շաղկապված է և իմ ծրագրի հինգերորդ յօդուածի ծանօթութեան մէջ շօշափված հարցը, այն է՝ որ նախապատրաստականի երկու բաժանմունքների համար ուսուցիչներ կարող են հրաւիրվել նաև այն անձերից, որոնք աւարտել են երրորդ լրացուցիչ դասարանը։ Այդպիսի թոյլատուութիւնը մանաւանդ կարևոր է վարժուհիներ գրաւելու համար, որոնց թիւը շատ քիչ է հայ դպրոցներում, մինչդեռ նրանք շատ օգտակար են տարրական դըպրոցներում։ Ուսուցիչները կարողութիւն ունեն պատրաստվել իրանց ապագայ գործունէութեան համար հոգևոր դպրոցներում, իսկ վարժուհիների համար չը կան այդպիսի դպրոցներ։ Գիմնազիաները չեն կարողանում պատրաստել այդպիսի վարժուհիներ, որովհետև նրանք չեն տալիս հայոց լեզուի կարգին գիտութիւն, որը հիմնական պահանջ է ուսուցչական պարտաւորութիւնների բաւարար կատարման համար հայ եկեղեցական-ծխական ուսումնարաններում։ Եւ հասկանալի է, որ միդասեան դպրոցի առաջին երկու բաժանմունքների համար բաւական գիտութիւն կունենան այս վարժուհիները, մանաւանդ որ նրանք պէտք է գործեն աւելի լուրջ պատրաստված աւագ ուսուցչի ընդհանուր ղեկավարութեան տակ։

Դ. Ինչ վերաբերում է զինուորագրական արտօնութիւններին, ես կը խօսեմ հակիրճ։ Իմ արած բացատրութիւններից յետոյ բնական է ցանկալ, որ հայ դպրոցների ուսուցիչները, թէ ցենզ ունեցողները և թէ հոգևոր դպրոցներ աւարտածները, հաւասարապէս օգտվեն զինուորական արտօնութիւններից և որ հայ դպրոցների վրա ընդհանրապէս տարածված լինեն բոլոր այն արտօնութիւնները, որոնք վերապահված են պետութեան նոյնատեսակ դպրոցների համար։

Այսպէս է այն նկատողութիւնների էութիւնը, որ ես անհրաժեշտ համարեցի գրաւոր ներկայացնել, իբրև իմ առանձին կարծիքը, և յոյս ունեմ, որ նրանք ուշադրութեան կառնվեն կանոնադրութեան ծրագրի վերջնական խմբագրութեան ժամանակ։

Այս իմ կարծիքը բերանացի զեկուցված է նաև Կովկասի Փոխարքային՝ յատուկ ընդունելութեան ժամանակ»։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կոպէնհագէն, 10 յուլիսի

Յուլիսի 9-ի երեկոյեան նախագահ Ֆալիէր, սրտագին կերպով հրաժեշտ տալով արքայական ընտանիքին, «Պասսինի» նաւով ուղևորվեց Ստոկհոլմ։ Հրաժեշտի ժամանակ բերդից և զինուորական նաւերից թնդում էին թնդանօթները։ («Հ. Գ.»)

Կ. Պօլիս, 10 յուլիսի

Ալբանական պարագլուխների ժողովը Ֆէրիզօվիչում հեռագիր ուղարկեց սուլթանին, պահանջելով վերականգնել 1876 թւի սահմանադրութիւնը։ («Հ. Գ.»)

Կ. Պօլիս, 10 յուլիսի

Տեղի ունեցան հետևեալ փոփոխութիւնները մինիստրների խորհրդի կազմի մէջ. Սաիդ-փաշան նշանակված է մեծ վէզիր, գլխաւոր շտաբի հրամանատար մարշալ Ոմէրուշդի-փաշա—զինուորական մինիստր, մնացած մինիստրները մնացին իրանց պաշտօններում։

Յերեկվայ 2 ժամ 30 րոպէին Բ. Դրան մէջ կայացաւ, սովորական ցէրէմօնիայով, խատտը-հիւմայունի (սուլթանի հրովարտակ) ընթերցանութիւնը, որը ծանուցանում է մեծ-վէզիրի և զինուորական մինիստրի նշանակման մասին։ Ներկայ էին բոլոր պաշտօնական անձինք։ Հանդէսը վերջանալուց յետոյ նոր մեծ վէզիրը, զինուորական մինիստրը և մնացած մինիստրները գնացին Ելդըզ հաւատարիմ հպատակութեան զգացմունքները յայտնելու համար սուլթանին։ («Հ. Գ.»)

Կ. Պօլիս, 10 յուլիսի

Թիւրքական լրագիրների երեկոյեան առանձին յաւելուածների մէջ հրատարակված է հետևեալ հրովարտակը Սաիդ-փաշայի անունով. «Իմ վեհապանծ վէզիր Սաիդ-փաշա։ Ֆերիդ-փաշային արձակելուց յետոյ, ի վարձատրութիւն ձեր հաւատարիմ ծառայութեան, շնորհված է ձեզ մեծ վէզիրի աստիճանը։ Տայ Աստուած ձեզ աջող գործունէութիւն»։

Լրագրական յաւելուածները հաղորդում են, որ շէյխ-իւլ-իսլամ Ջամալ-Եդդինը թողնված է պաշտօնում, նախկին մեծ վէզիր Քեամիլ-փաշան, ի տրիտուր նրա փորձառութեան և հաւատարիմ ծառայութեան, մտցված է մինիստրների խորհրդի կազմի մէջ։ Նոր զինուորական մինիստր նշանակելու հետ միաժամանակ սէրասկէրիատը վերափոխված է զինուորական մինիստրութեան։ («Հ. Գ.»)

Բէլգրադ, 10 յուլիսի

Անգլիական դեսպանը յուլիսի 9-ին յանձնեց սերբիական կառավարութեանը մի յայտագիր չէտայութեան և Մակեդոնիայում և Հին-Սերբիայում տեղի ունեցած դէպքերի մասին ու միաժամանակ խնդրում է պատասխան։ Սերբիական կառավարութիւնն անգլիական կառավարութեան առաջադրութեանը պատասխանեց մի յայտագրով, որի մէջ իսկական լուսաբանութիւն է տալիս այդ դէպքերին և հաւատացնում է անգլիական կառավարութեանը, որ սերբիական կառավարութիւնը իրանից կախված բոլոր միջոցները ձեռք կառնի, որպէսզի ապագայում ամենաեռանդուն կերպով արգելէ որևէ աջակցութիւն չէտայութեան. սերբիական կառավարութիւնը պատրաստ է մինչև անգամ բալկանեան մնացած պետութիւնների հետ համաձայնութեամբ հաշտվել այն բոլոր ձեռնարկութիւնների հետ, որ կարող են առաջարկել մեծ պետութիւնները որպէս ամենից յարմարաւորներ շուտափոյթ և ամենաարմատական կերպով դադարեցնել չէտայութիւնը երեք վիլայէթներում, ուր մտցվում են ռէֆօրմները։ («Հ. Գ.»)

Թիւրքիայում օր ըստ օրէ աճող սպառնալի անցքերի շնորհիւ Կրետէ կղզու ափերում ծովապետ Ֆուլտօնի հրամանատարութեան տակ գըտնվող անգլիական միջերկրական նաւատորմը իր միջից բաժանել է երկու յածանաւ, որոնք հարկաւոր դէպքում կը մտնեն Դարդանելի նեղուցը՝ Թիւրքիայում ապրող անգլիական հպատակների շահերը պաշտպանելու համար։

Կ. Պօլսի մի դիպլոմատի ասածների հիման վրա, Հռոմի «Corriere L'Habia» լրագիրը հաղորդում է, որ Գերմանիայի, Աւստրիայի և Թիւրքիայի միջև ներկայումս բանակցութիւններ են տեղի ունենում պատերազմական դաշնակցութիւն կազմելու համար։ Պատերազմի դէպքում այդ դաշնակցութիւնը Թիւրքիային խոշոր հնարաւորութիւն է տալիս խոշոր պատերազմական ուժեր զէնքի կանչել ռուսական սահմանագլխի մօտ Կովկասում։ Այդպիսի ճանապարհով հնարաւոր կը լինի Ռուսաստանին հարկադրել իր զօրքերի մեծ մասը հեռացնելու արևմտեան սահմաններից։

Մօսկվա, 10 յուլիսի

Գեն.-նահանգապետը 3000 ր. տուգանքի ենթարկեց «Рус. Вѣд.» լրագիրը՝ մահվան պատժի մասին Լեվ Տօլստօյի յօդուածը տպելու համար։
(«Հ. Գ.»)

Կիեվում տեղի ունեցող միսիոներական համագումարում, որին մասնակցելու է գնացել սինօդի օբեր-պրօկուրօր Իզվօլսկին, նիստերի ծրագրի մէջ մտցված է ռուսաց միսիայի նպատակների որոշումը հրէաների մէջ գործելու և սօցիալ-դեմօկրատական շարժման դէմ մաքառելու համար։

Իւրիեվի բժշկական ինստիտուտի ազատ ունկնդիր Մինդլինը, որ ներկայացրել էր կեղծ ատեստատ, և դանտիստ Գօլդենբերգը, որ զբաղված էր կեղծ ատեստատներ պատրաստելով, դատապարտված են ուղղիչ բաժանմունքների. առաջինը երեք տարով և երկրորդը 5 տարով։

Պետերբուրգից հեռագրով «Баку» լրագրին հետևեալ տեղեկութիւններն են հաղորդում.

Եապօնա-չինական երկաթուղին տուել է Եապօնիային 4 միլիօն զուտ օգուտ։

Հիւսիս-արևմտեան երկաթուղուն կարգադրված է Մանջուրիա տանել պետական գանձարանի հաշւով 70 գերմանացի զինուորներ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։

ԵՐԳԸ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

III*)

Մեր անցեալ յօդուածներում խօսելով երգ և ձայնագրութիւն առարկաների ներկայ դրութեան մասին ծխական և թեմական դպրոցներում՝ հարևանցիօրէն ակնարկ ձգեցինք նաև խմբական երգեցողութեան վրա։ Վերջին մեր դպրոցներում չը կայ և նրա մասին չէ էլ մտածվում, սակայն խմբական երգեցողութիւնը այնքան էլ թեթև և հասարակ առարկայ չէ, ինչպէս կարծվում է, և մենք այս յօդուածով աւելի մանրամասն կը ծանրանանք այդ նիւթի վրա ու կը պարզաբանենք ըստ կարելւոյն։

Խմբական երգեցողութիւնը ամենալաւ միջոցն է զարգացնելու երաժշտականութիւնը և դրա հետ՝ զարթեցնելու մարդու մէջ նոր զգացումներ և պատուաստելու ազնիւ սովորութիւններ։

Երաժշտական ընդունակութեան նպատակայարմար զարգացումը մեծ նշանակութիւն ունի անհատի և հասարակութեան համար։

Երաժշտութիւնը բանաստեղծութիւն է։ Նա մարդկութեան համար կարող է լինել եւ օգտակար եւ վնասակար։ Նա ընդունակ է ինչպէս բարձրացնելու, նոյնպէս և գլորելու մարդու հոգին։ Այլ խօսքով՝ երաժշտութիւնը, ինչպէս և իւրաքանչիւր գեղարուեստ, կարող է ազնուացնել մարդուն և այլասերել նրան վերջնականապէս։

---

*) Տես «Մշակ» № 149.

*) Տես «Մշակ» №№ 35 և 74.

Այդ պատճառով էլ մեր դպրոցները իրաւունք չունեն նոր աճող սերունդի երաժշտականութիւնը շահագործելու, այլ, ընդհակառակն, նրանք պարտաւոր են նրա էսթետիկական բոլոր պահանջներին ճշմարիտ գոհացում տալ, առաջնորդելով նրանց դէպի գեղարուեստի վեհ ու ազնիւ ասպարէզը։

Եւ անկասկած լուրջ ու գեղարուեստական բազմաձայն խմբական երգեցողութիւնը, որպէս ամենալաւ և ամենամատչելի միջոց, կարող է մանկան երաժշտա-էսթետիկական պահանջներին բաւարարութիւն տալ, ուստի նա պէտք է մտնէ մեր դպրոցների միւս կարևոր համարված առարկաների շարքը ինչպէս պարտաւորեցուցիչ առարկայ և նոյնիսկ պէտք է գրաւէ առանձին տեղ։

Խմբական երգեցողութիւնը երկու կարևոր դեր ու նշանակութիւն ունի, այն է՝ երաժշտագիտական և կրթական։

Խմբական երգեցողութեան երաժշտագիտական դերն ու նշանակութիւնը կայանում է նրանում, որ խմբերգի միջոցով մասնակցողների լսողութիւնը, ձայնը և ձայնիչները երգելու ընդունակութիւնը չափազանց զարգանում է։ Մօտիկ յարաբերութեան մէջ լինելով երաժշտական գրուածքների և նրանց արտայայտութիւնների հետ՝ նոյնպէս զարգանում է ուշադիր յարաբերութիւն ու սերտ կապակցութիւն դէպի գեղարուեստը, մանաւորապէս դէպի երաժշտութիւնը, և որի ընթացքում, ի հարկէ, աւելի շատ երևան են գալիս երաժշտական ընդունակութիւնները։

Խմբական երգեցողութեան կրթական ու հոգեկան բարձրացման նշանակութիւնը աւելի մեծ է։

Խմբերգը իր հարուստ բովանդակութեամբ երաժշտականօրէն զարգացնելով մարդուն՝ նրա հոգու անհրաժեշտ պահանջն է դառնում, էսթետիկական զգացումների նորանոր ձգտումներ է առաջ բերում և նրանց իրագործմանը ամեն կերպ բաւարարութիւն որոնում։

Մեծ երաժիշտների գեղարուեստական գրուածքները՝ լիքը վեհ ու խորունկ զգացումներով՝ խմբերգի միջոցով անպայման անդրադառնում են նրանց արտայայտիչների վրա և առաջ բերում սէր դէպի մերձաւորը, ընկերը, ընտանիքը և այլն։

Եւ այս բոլորը խորապէս և ազդուօրէն կարող է զգացնել տալ միմեանց խմբված ձայների կատարելագործված արտայայտութիւնը—խմբերգը։

Այսպէս ուրեմն երգը, ձայնագրութիւնը, խմբերգը, գեղարուեստի այս երեք անբաժան, մէկը միւսին լրացնող՝ միութեան կարևորութիւնը պէտք է գիտակցեն արդէն մեր դպրոցները։ Անցան այն ժամանակները, երբ գեղարուեստի վրա նայում էին իբրև զուարճալիքի. այժմ ամեն կողմից հնչում են՝ «գեղարուեստը պէտք է, գեղարուեստն անհրաժեշտութիւն է»։

Ուրեմն գեղարուեստը, որպէս այդպիսին, չը պէտք է քչերի առանձնաշնորհումն լինի. ընդհակառակը նա պէտք է ընդհանուրի սեփականութիւն դառնայ։ Եւ եթէ մեր դպրոցներն ըմբռնում են այս, թող առաջ գնան այս ուղղութեամբ և դառնան վսեմ, գեղեցիկ ու ճշմարիտ տարածման իսկական ազդակը։

Ազատ Մանուկեան

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ղշլաղ, 9 յուլիսի

Վերջին օրերս մեզանում գողութիւնները շատացել են։ Օր չէ անցնում, որ գողերը մի քանի անասուն չը փախցնեն։ Այս առաւօտ մեր գիւղացի Մինաս Աֆինեանցը իր մի հատիկ եզը գտաւ գիւղի մօտ մորթված և կաշին էլ տարված։ Գողերը մի կաշու համար մի ամբողջ քաղցած ընտանիքի զրկեցին իրանց միակ աշխատաւոր եզից։ Սրա նման դէպքեր մեզանում շարունակ կրկնվում են։

Մ. Ղազարեան

Բագու, 7 յուլիսի

Այս րոպէիս հազիւ թէ ամբողջ երկրագնդի վրա գտնվի մի որևէ քաղաք, ուր այնքան գողութիւն, էքսպրօպրիացիա, աւազակութիւն, մարդախաբութիւն, մարդասպանութիւն, ամբաձգութիւն և այլ մէկը միւսից քստմնելի, զզուելի, սարսափեցնող և ապշեցնող դէպքեր պատահեն, որքան պատահում են այս անբաղդ, Աստուածանից մոռացված, սարսափելի քաղաքում։

Որ օրի վրա անցնում է, և հազիւ մի աւրինահեղ անցքի տպաւորութիւնը, որ անասելի յուզել և ապշեցրել էր ձեր միտքն ու հոգին; հազիւ մի քստմնելի դրամայի ճնշող ծանրութիւնը, որ կաշկանդել էր ձեր ուղեղն ու խոր խոցել ձեր սիրտը, հազիւ մեծ ջանք գործադրելով մի րոպէ թօթափել էիք ձեզնից այդ կօշմարը, ահա յանկարծ գալիս է մի աւելի ահռելին, աւելի զարհուրելին; և այդ շարունակ, ամեն օր, ամեն ժամ, գիշեր և ցերեկ։

Մարդկային կեանքի արժէքը եկել հաւասարվել է մի սոխի արժէքին, մարդկային մի առողջ մարմնի մի ակնթարթում ոչնչացնելը, յաւիտեան նրան լռեցնելը, մեռցնելը հաւասարվել է մի կատաղած շան սատկեցնելուն, և մի մատղաշ պատանու և կամ մի անմեղ օրիորդի կեանքը խորտակելը հաւասարվել է խաղաթղթից շինած մի տնակի՝ փչելով ցրելուն, ոչնչացնելուն։

Ո՞ւր կը տանի մեզ այդ ամենը։

Մեծ պասի շաբաթներից մէկում քահանաներից մէկը ասում է ինձ, որ մի շաբաթում 19 հայ երիտասարդի դիակներ են հողին յանձնվել, բոլորը սպանված, բացի մէկից, որ զոհ է գնացել իր անզգուշութեամբ բացված ատրճանակի գնդակին։

Մէկ նայեցէք փողոցներով սլացող սևազգեստ կանանցով բեռնաւորված կառքերին...

Ինչքա՜ն է... այդ անմեղ, որդեկորոյս մայրերի թիւը։

Ահա անցնում եմ Նիկօլայեվսկայա լայն փողոցով, կառք կառքի ետևից է սլանում, մէկը վեր, մէկը վար, և ամենքի մէջ այն զոհերի յուսահատ ազգականների ցամաքած դէմքեր, արիւնակալած աչքեր որոնք չը գիտեն ինչու եկան աշխարհ, ինչու ժամանակից առաջ զոհ գնացին սրա նրա գնդակին։

Միթէ այդ անբաղդ ծնողները սնուցել մեծացրել են իրանց զաւակներին, հազար ու մի փորձանքից ազատ ու հեռու են պահել, որ օր ծերութեան մնան անխնամ, անտէր, օրվայ ցամաք հացին կարօտ։

Իսկ այդ զոհերի փոքրիկ որբացած զաւակները որո՞նց խնամքին պիտի յանձնըվեն։

Անտանելի դրութիւն... Այլասերվել ենք այնպէս... որ մի րոպէ ինքներս մեզնից զզւում ենք։

Այդ ինչ դիւթական գաւազանի զօրութիւն էր, որ մեզ այդպէս կերպարանափոխեց։ Ինքնապաշտպանութեան զգացումից, թշնամուց պաշտպանվելու, մեր պատիւը էժան չը ծախելու նպատակով հրազէններ ձեռք բերինք, բայց այդ զէնք չը դառաւ մեզ համար, այլ մի դժոխային խաղ... Խաղում ենք մարդկային կեանքերի հետ... Չը պէտք է թողնել սուրը ժանգոտվի, չը պէտք է ատրճանակը անգործ մնայ, ուրեմն ճն, զարկենք իրար... ճն. թող ուրեմն ասեն, որ հայն էլ գիտէ արիւն թափել։

Կար ժամանակ, որ ամենայն օր թուրքն էր անմիտ սպանութիւններ գործողը, թուրքաց թաղն էր արեան մի դաշտ. իսկ այժմ հայոց թաղերում էլ քարի կտոր չը մնաց, որ հայի արիւնով չը շաղախվէր։ Մի ժամանակ հայը լցնում էր ուսումնարանները, իսկ թուրքը բանտերը, իսկ այժմ բանտերը հայերով լցվեցին։ Եւ եթէ բաններս այդպէս գնայ, շուտով թուրքից էլ յետ կը մնանք։

Հրէաները եկան հայի սկսած գործերը ժառանգեցին իսկ հայերը մաքուր աշխատանքը թողին և սկսեցին մի նոր արհեստ—դրամաշորթութիւն։

Ցոյց տուէք մեզ, բարի մարդիկ, գիտէք արդեօք մի ճանապարհ, մի միջոց, որ մի րոպէ կանգնեցնէք մեզ, որ այդ կօշմարից մեզ արթնացնէք, որ այդ արբեցած դրութիւնից մեզ սթափեցնէք։

Ձեռք պարզեցէք մեզ, փորձված, խելօք մարդիկ։

Ասպետ

ԼԱՒ Է ՈՒՇ, ՔԱՆ ԵՐԲԷՔ

Բնութիւնը առատօրէն, խնամքով ու ճաշակով տուել է այն ամեն հրաշալիքները Մեծ-Ղարաքիլիսա գիւղին, ինչ որ անհրաժեշտօրէն կարևոր է մի տեղ լաւ ամարանոց լինելու համար. բարձրաբերձ լեռներ ծառախիտ հովասուն անտառներով, ընդարձակ սիզաւէտ ու ծաղկաւէտ դաշտեր, կարկաչահոս գետակներ ու գետեր՝ մաքուր բիւրեղեայ ջրերով ու համեղ կարմրախայտ ձկներով. մեղմ և առողջարար օդ. հայաշատ կենտրոն ապահով թէ բնութեան արհաւիրքներից և թէ չար մարդկանց յարձակումներից. այս բոլոր հրաշալիքների հետ միացրէք և երկու մեծ ճանապարհները՝ մէկը խճուղին, միւսը երկաթուղին, որոնք Ղարաքիլիսան միացնում են Բագուի, Թիֆլիսի, Ալէքսանդրօպօլի, Երևանի և Կարսի հետ, այն ժամանակ ինքնըստինքեան հասկանալի կը լինի, որ Ղարաքիլիսան ստեղծված է Կովկասում առաջնակարգ ամարանոց լինելու համար. մնում էր, որ մարդը իր կողմից իր խելքով ու ճաշակով բնութեան տուած հրաշալիքները յարմարեցնէր ամարանոց եկողների պահանջներին։

Բայց տեղացի ժողովուրդը զլացել է իր ժամանակին այդ մասին հոգ տանելու. ահա տասն տարուց աւելի է, որ Ղարաքիլիսան ծառայում է որպէս ամարանոց և այսքան տարվայ ընթացքում տեղացիները համարեա ոչինչ չեն արել չունեն նշանակած մի զբօսավայր, չունեն գրադարան-ընթերցարան, չունեն կանոնաւոր թատրոնական բեմ, չեն մտածել իր ժամանակին հրաւիրել երաժշտական խումբ. փողոցների մաքրութիւնը և լուսաւորութիւնը բաւարար չեն. և ահա այս անտարբերութեան հետևանքը. այսօր տուժում են ղարաքիլիսեցիք, ամարանոց եկողների թիւը շատ քիչ է, եկւորները հեռանում են, թէև ցաւելով խոստովանում են, որ բնութիւնը Ղարաքիլիսային ամեն բան տուել է, իրանք սրտով կը ցանկանային մնալու, բայց յարմարութիւններ չը կան։

Առածն ասում է՝ «Լաւ է ուշ, քան երբէք». և Ղարաքիլիսայի բնակիչներն այսօր այդ դարաւոր առակի միտքն ըմբռնում են և քնած տեղից զարթնել են և եռանդով աշխատում են իրանց անտարբերութեան սխալն ուղղել։

Հասարակութիւնը ընտրել է մի մասնաժողով, որը տանուտէրի հետ միասին խիստ եռանդով աշխատում է գիւղի բարեկարգութեան մասին։ Փողոցները օրը երկու անգամ մաքրում և ջրում են, եղած լապտերների թիւը աւելանում է նոր տեսակի մեծ լապտերներով, բոլոր մթերքների վրա խիստ հսկողութիւն կայ, որ փտած չը լինեն և գինը՝ չափաւոր լինի, անհրաժեշտ մթերքների համար նշանակված են մաքսիմալ գներ, արդէն ստացել են ակումբ բաց անելու իրաւունք, ընդամին և գրադարան-ընթերցարան պահելու. պատրաստ են ակումբի և գրադարան-ընթերցարանի շինութիւնը շուտով կը ստացվեն լրագիրներ, բեմը նորոգվում է։

Այս բոլորի հետ միացրէք և որ խելացի և նպատակայարմար միտքը, որ նոր յղացել են՝ այն է «Վանաց ձոր» կոչված գետի վրա, անտառի ստորոտներում, ամարանոցների հողաբաժիններ ուռչելը, որպէսզի նոր գիւղը բաժանվի հին գիւղից և անտառին և գետին կպած լինի. մինչև այժմ որոշած էր եղել դրսեցու ոչ մի պայմանով հողաբաժին չը տալ, բայց այժմ զգում են, որ այդ սխալ է և ցանկութիւն ունեն այդ հարցը ևս դրական ձևով լուծել որպէսզի դրսի, կապիտալ և հասկացող ժողովուրդ մտնէ իրանց մէջ։

Այս բոլորը տեսնելով, մարդ ուրախանում է և հաւատում, որ եթէ այսպէս եռանդով շարունակեն բարենորոգութեան խնդիրը, Ղարաքիլիսան կարճ ժամանակից յետոյ կարող է մրցել Կովկասի առաջնակարգ ամարանոցների հետ։ Եւ իբրև մի օտար մարդ, ծանօթ լինելով Կովկասի միւս բոլոր ամարանոցների հետ, խղճով պիտի ասեմ, որ Ղարաքիլիսան իր բնութեան հրաշալիքներով, գերազանցում է բոլոր ամարանոցներին. պակասում էին յարմարութիւնները, այժմ այդ մասին խիստ եռանդով աշխատում են. «լաւ է ուշ, քան երբէք»։

Ամառնորդ Ա. Բ.

ՄԵՂՈՒԱԳԱՀԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

Ռուսաց մեղուապահական ընկերութիւնը 1908 թւի յուլիսի 29 ից մինչև օգոստոսի 7 ը կազմակերպում է Պետերբուրգում մեղուապահական համառուսական ցուցահանդէս այգեգործական և պարտիզպանական բաժանմունքներում։ Ցուցահանդէսը կազմվելու է հետևեալ ծրագրով. մեղուապահութեան մթերքներ, մեղուապահական գործիքներ, մեղրատու բոյսեր, մեղուապահական տնտեսութիւն, ձեռնարկներ մեղուապահական, պարտիզպանական և այգեգործական, պտղատու ծառերի բներ, պտուղներ և բանջարներ։

Յիշեալ ցուցահանդիսի էքսպօնատները ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան յատուկ կարգադրութեամբ մինչև ցուցահանդիսի վերջանալը ռուսական երկաթուղիներով իրաւունք են ստանում ճանապարհորդելու յատուկ արտօնեալ տարիֆով։

Լաւ էքսպօնատների համար երկրագործական մինիստրութեան, ռուսաց մեղուապահական ընկերութեան և այլ գիւղատնտեսական ընկերութիւնների կողմից կարժանան շքանշանների, նոյնպէս և նիւթական ու դրամական պրեմիաների։

ՆՈՐ ԿԱԼԱՆԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԲԱԳՈՒՈՒՄ

Երկաթուղային կամուրջի մօտիկ, Սև քաղաքի սահմանի վրա, Տօրգօվօյա փողոցի վրա գտնվող Վեզիրովի № 52 տան մէջ մի երկու օր առաջ երեկոյեան մի խումբ մարդիկ, որպէս թէ մէկի նշանադրութեան առիթով, հաւաքվել էին խնջոյքի, բայց իրօք դէպի մի ինչ-որ տեղ Բագուից ուղևորվող ընկերներին ճանապարհ դնելու նպատակով, որոնց թւում կային ոստիկանական պաշտօնեաների սպանութեան մէջ կասկածվող անձինք, նոյնպէս և մէկը՝ «Եապօն» մականունով, որը, ոստիկանական տեղեկութիւնների համաձայն, այդ սպանութիւնների գլխաւոր կազմակերպողն է։

Խուզարկու ոստիկանութեան պետ Դուբովը, տեղեկանալով այդ մասին, միջոցներ է ձեռք առնում կալանաւորելու այդ խմբակը։

Գիշերվայ ժամը 3-ին ոստիկանութիւնը յանկարծակի շրջապատում է տունը և գտնում է այնտեղ հաւաքված մօտ 30—35 հոգուց բաղկացած խումբը։ Բացի երկու պառաւ կանանցից, նրանց մէջ չը կար և ոչ մի կին, ուստի այդ հանգամանքը հիմք է տուել կասկածելու, որ այդտեղ ընտանեկան հանդէսի համար չեն հաւաքվել։ Ժողովականները, ինչպէս երևում է, ոչ՛ մի վտանգ չէին սպասում և իրանց համար կեր ու խումի էին անձնատուր եղել։

Ոստիկանութիւնը ներս մտնելուն պէս ներսում եղողները ուզում էին դուրս թըռչել պատուհաններից, բայց, նկատելով որ դրսից էլ պաշարված են, անձնատուր եղան։

Կալանաւորված են 28 հոգի, որոնցից երեք հոգի, որպէս ամենից աւելի կասկածելիներ—1) Գանձակի նահանգի բնակիչ Գրիգոր Յարութիւնեան Առաքելեանց, վարսաւիր 21 տարեկան, 2) Նախիջևանի գաւառի բնակիչ Գրիգոր Միքայէլեան Գէորգեանց՝ 20 տ., գիշերապահ, և 3) Զանգեզուրի գաւառի բնակիչ Գրիգոր Յարութիւնեան Բաղդասարեանց, «Եապօն» մականունով, 24 տարեկան,—խիստ հսկողութեան տակ ուղարկվում են բանտը։ («Б.»)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Յուլիսի 10-ին, երեկոյեան ժամը 8-ին, զինուորական պահակախումբը I ոստիկանամասի ոստիկանների հետ խուզարկութիւն է կատարել Ցինեաոսկայա, Մատինօվսկայա, Կազբէկսկայա և Գունիբսկայա փողոցների շրջանում։ Գուդաուտսկայա նրբափողոցում պահակախումբը կանգնեցրել է մի երիտասարդ կնոջ, որը աշխատում էր անյայտանալ. նրա մօտ բռնված փաթեթի մէջ գտնվել են մեծ ու փոքր սղոցիկներ։ Միևնոյն ժամանակ պահակները պաշարում են № 2 տունը, որ մի կողմից նայում է դէպի Գունիբսկայա, իսկ միւս կողմից՝ Գուդաուտսկայա փողոցները, որտեղ երկրորդ յարկում սենեակի մէջ նստած էին 3 երիտասարդներ։ Սենեակը խուզարկելիս, պահարանի մէջ գտել են 2 նոր ատրճանակներ «մաուզերի» ձևի, երկու կարճացրած «բրաունինգ» ատրճանակ, փամփուշտներ և այլ իրեր, մթերքներ, 3 խողովակներ՝ լցված պայթուցիկ հեղուկներով, թթուտներով, 300 թռուցիկներ ռուսերէն ու վրացերէն լեզուներով, այլևայլ մթերքներ, Պետերբուրգ քաղաքի յատակագիծը, երկու մետաղէ բանկաներ ծծումբով լի, մի քանի մաքուր անցագիր-բլանկներ, երկու մորթէ գդակներ, որոնք, ինչպէս երևում է, պատրաստված են եղել կալանաւորների նոր փախուստ կազմակերպելու համար։

◆ Յուլիսի 10-ի երեկոյեան, Թիֆլիսում, Հալաբարի, Մուշտայիդի և 5-րդ մասերում զինուորական պահակախումբը խուզարկութիւններ է կատարել, կանգնեցնելով փողոցներում երթևեկողներին։

◆ Թիֆլիսի ժամ. գեն.-նահանգապետի կարգադրութեամբ Ռաճայի գաւառի Սաղի գիւղի բնակիչ Գէօրգի Մենդելին իբրև հասարակական խաղաղութեան և պետական կարգապահութեան համար վնասակար մի անձ՝ աքսորվում է Օրենբուրգի նահանգը պատերազմական դրութեան ամբողջ ժամանակը։ Այնտեղ է աքսորվում 3 տարի ժամանակամիջոցով իբրև անբարեյուսալի անձն Սարգիս Խաչատրեանը։ Ալէքսանդրօպօլի գաւառի Ջարջարիս գիւղի բնակիչ Խալիլ Մամեդ-օղլին զէնք կրելու մասին սահմանված կանոնները խախտելու համար ենթարկվում է բանտարկութեան երեք ամսով։

◆ Թիֆլիսի ժամանակաւոր գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ փակված է Թիֆլիսում վրացերէն լեզուով հրատարակվող «Ախալի Սխիվի» լրագիրը (Նոր Ճառագայթ) իր ծայրայեղ վնասակար ուղղութեան համար։

◆ Բօրչալուից հեռագրական տեղեկութիւն է ստացվել, որ յուլիսի 9-ի երեկոյեան, Կակղիանի գիւղի մօտ, անտառում, տեղական ոստիկանութիւնը հետամուտ եղաւ յայտնի Սամադի աւազակախմբին. հրացանաձգութեան միջոցին վիրաւորված է աւազակներից մէկի ձին, խլված են եօթ ձի իրանց բեռներով։ Աւազակները վիրաւորված՝ թագնվել են անտառի թաւուտի մէջ։ Շարունակում են որոնել նրանց։

◆ Թիֆլիսի պօստ-հեռագրատան պետը խնդրում է մեզ յայտնել, որ հասարակութեան յարմարութեան համար կախված են լրացուցիչ պօստ-արկղներ հասարակ նամակներ ձգելու համար հետևեալ տեղերում. —Երևանեան հրապարակում՝ քաղաքային վարչութեան շինութեան մօտ, Բեհթլեհէմի փողոցի անկիւնում, Գէօրգիէվսկի հրապարակի վրա, Ռօզօվայա հրապարակում № 3 տան մօտ, Միքայէլեան փողոցում Կիրխի շինութեան մօտ, Սօլդատսկի բազարում առևտրական ոստիկանութեան կից, Մադաթեան և Օրբելեան փողոցների անկիւնում Արծրունեանցի շինութեան մօտ, Սապէօրնի և Բարիատինսկայա փողոցների անկիւնում և Ցինեաոսկայա փողոցում։

◆ Ալէքսանդրօպօլի քաղաքային առևտրական դպրոցի հրաժարված դիրեկտոր Ռօմանօվսկու փոխարէն՝ միաձայն դիրեկտոր է ընտրված Լեւոն Սարգսեան և առաջարկված է ուր հարկն է ի հաստատութիւն։ Ընտրութեան մասին հեռագրված է ի գիտութիւն Սարգսեանին։

◆ Անիից եկողները մեզ հաղորդում են, որ Անիի շրջակայ գիւղերում դեղօրայքի մեծ կարիք է զգացվում։ Ներկայումս Անիում տ. Մառրի աջակցութեամբ գործում է բժ. Տիրան Բալաքեանը, որ սիրայօժար կերպով ձրիաբար բժշկական օգնութիւն է հասցնում իրան դիմող գիւղացի հիւանդներին առանց ազգի խտրութեան։

◆ Ղարաքիլիսայի մօտերքում գտնված է նորերս պղնձէ հանք։ Նրա շահագործութեան համար, ինչպէս տեղեկանում ենք, Թիֆլիսում կազմակերպվում է ակցիօներական ընկերութիւն։

◆ Բօրչալուի գաւառի Եկատերինենֆելդ գաղութում բացվել է գերմանացի այգեգործների ընկերութիւն «Ունիօն» անունով։ Ընկերութեան նախագահ է ընտրվել յայտնի գինեգործ Ալենդինգեն։

◆ Թիֆլիսի բօտանիկական այգին վերջին ժամանակներս Կովկասի զանազան տեղերի գիւղատնտեսներից հարցապնդումներ է ստանում հացահատիկների մշակման մասին գեներալ Լեվիցկու եղանակով։ Այդ նամակների մէջ խնդրում են ցուցմունքներ տալ՝ հարկաւո՞ր է, արդեօք, ուղղել նրանց և այլն։ Բուսաբանական այգին իր հերթին չունենալով ձեռքի տակ գիտական փորձեր, հետաքրքրվողների ուշադրութիւնը հրաւիրում է այդ հարցի առիթով եղած գրականութեան վրա։

◆ Քաղաքային վարելահողերն ու արօտատեղիները կապալով տալու աճուրդը, որ նշանակված էր յուլիսի 10-ին, ցածր գներ առաջարկվելու պատճառով չէ կայացել, և կրկնաճուրդը նշանակված է յուլիսի 14-ին, երկուշաբթի օրը։

◆ Կովկասի Փոխարքան թոյլատրել է ինժեներ-տեխնոլոգ Ա. Բ. Երեմեանցին, Դերբենդի բնակիչ 2-րդ կարգի վաճառական Իսմայիլ Իբրահիմօվին և Քիւրայի շըրջանի Պօպերքենդ գիւղի բնակիչ Լաչին Աղխա-օղլուն աւտօմօբիլային հաղորդակցութիւն հաստատել Թեմիր-Խան-Շուրայի ու Պետրօվսկի և Գունիբի միջև, ճանապարհորդներ ու բեռներ տեղափոխելու համար։

◆ Յուլիսի 9-ին, Կօջօրում, Արնաուտովի ամարանոցային իջևանատեղիից գողացված է բօրսային կառքեր պահողի ձիաների սարքը, որ արժէ 120 րուբլի։ Գողութեան մէջ կասկածվելու համար կալանաւորված է Երևանեան նահանգի բնակիչ Սիմէօն Աղախանեանցը։

◆ Երեք օր սրանից առաջ կօջօրեան խճուղու վրա, Տաբախմելա գիւղին մօտիկ, թաւագլոր է եղել Թիֆլիսի գործարանատէր Միք. Բօզարջեանցին պատկանող աւտօմօբիլը, առաջին անիւը կոտրվելուց։ Աւտօմօբիլում նստողները վախեցել են միայն։

◆ Թիֆլիսի դումայի ֆինանսական և հողային մասնաժողովների նախագահ Բ. Վերմիշեանը, որ այժմս գտնվում է Բագւում, հրաժարվել է նախագահի պաշտօնից։

◆ Պենզայի նահանգի գիւղացի Ալէքսանդր Վասիլիևիչ Օսօկինը դիմել է նահանգապետին և խնդրել թոյլ տալ իրան հրատարակելու ռուսերէն լեզուով ամենօրեայ մի լրագիր «ВѢСТНИКЪ» անունով։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Յուլիսի 10-ին, ցերեկվայ ժամը 1-ին, Պուշկինեան փողոցում, № 1 տան մօտիկ, իշխանուհի Մարիա Վաչնաձէի վրա է յարձակվում Սօլօլակսկայա փողոցում № 10 տան մէջ ապրող Գօրի քաղաքի բնակիչ Լաւրենտիյ Սահակաձէն և նրա վերարկուի գրպանից դուրս հանելով պորտմօնէն 20 րուբլով սկսում է փախչել, բայց բռնվում է։ Սահակաձէին յանձնել են դատաստանական իշխանութեան, իսկ փողերը յանձնված ըստ պատկանելոյն։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

◆ Ինչպէս առաջներում հաղորդել էինք, Միրզաբէգեանցի գործարանում կատարելագործված նոր մեքենաներ գործածութեան մտցնելու պատճառով մօտ 180 բանւորներ պէտք է արձակվեն ծառայութիւնից, որից 120-ը արդէն հեռացել են, 60 հոգի էլ դեռ պէտք է հեռացվեն։ Սակայն մնացող բանւորների մէջ կան 20 տարուց աւելի փիրմայում ծառայողներ, որոնց թւում հիւանդներ, թոքախտաւորներ, որոնք հէնց իրանք կուզենան հեռանալ ծառայութիւնից և ստանալ համապատասխան վարձատրութիւն, մինչդեռ արձակվում են երիտասարդ, ուժեղ բանւորները։ Յուլիսի 6-ին բանւորները, ժողով գումարելով, հարց են զարթեցրել, որպէսզի բանւորների արձակումը տեղի ունենայ հէնց բանւորների իրանց ընտրութեամբ։ Նրանց սպառնացին փակել գործարանը։ Գործարանական տեսուչը յորդորել է բանւորներին խնդիրը կօնֆլիկտի չը հասցնել։

◆ Կովկասեան պօստ-հեռագրական շըրջանի կառավարչի շրջաբերական կարգադրութեան համաձայն, յուլիսի 8-ից Բագուի հեռագրատունը ընդհատել է Պարսկաստան ուղարկվող հեռագիրների ընդունելութիւնը։ Հեռագրական հաղորդակցութեան ընդհատվելու պատճառը Պարսկաստանի մէջ ներկայումս տեղի ունեցող անցքերն են։

◆ Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն առաջարկել է դումայի դպրոցական մասնաժողովին Միքայէլեան քաղաքային ու տեխնիքական դպրոցներից արձակված ուսուցիչների փոխարէն նորերին վարձելիս ի նկատի առնել 6 հոգու, որոնք այս տարի աւարտել են Թիֆլիսի ուսուցչական ինստիտուտը։

◆ Ղարասուից յուլիսի 8-ի առաւօտեան ստացված հեռագրական տեղեկութեան համաձայն, տեղական պրիստաւը հաղորդում է, որ նա հալածում է երկաթուղային «Սանգաչալա» և «Ալեաթ» կայարանների մօտերքում գործող աւազակային խումբը, որը ներկայումս թագնված է Բագուի գաւառի սահմաններում։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Պետերբուրգի մանկավարժական ընկերութիւնը վճռել է առաջիկայ ծննդեան առնների արձակուրդներին հրաւիրել բոլոր ժողովրդական ուսուցիչներին։ Այդ նպատակի համար ընկերութիւնն արդէն հարկաւոր թոյլտուութիւնը ստացել է։ Ներկայումս մանկավարժական ընկերութիւնը գրաւոր դիմում է արել բոլոր ուսուցչական փոխադարձ օգնութեան ընկերութիւններին, ուսուցչական դրամարկղներին և մանկավարժական կրուժօկներին՝ խնդրելով հաղորդել ոչ ուշ, քան մինչև սեպտեմբերի 1-ը. 1) յարմար է համարում, արդեօք, ուսուցչական ընկերութիւնների ներկայացուցիչների համագումար հրաւիրելը ծննդեան արձակուրդներին, 2) կարծէ արդեօք յիշեալ ընկերութիւնը մասնակցել իր ներկայացուցիչների միջոցով և 3) ինչ հարց, վերաբերեալ ուսուցիչների հոգևոր, նիւթական և իրաւական դրութեան, հարկաւոր է մտցնել առաջիկայ համագումարի ծրագրի մէջ։ («Б. Вѣд.»)

◆ «Вечеръ» լրագիրը արժանահաւատ աղբիւրներից տեղեկացել է, որ աշնանը կատարվելու է մի մեծ արտաքին փոխառութիւն։ Ստորագրութիւնը տեղի կունենայ Անգլիայում և Ֆրանսիայում։

◆ Յուլիսի 18 ին, Մ. Եա. Հերցինշտէյնի սպանութեան տարեդարձի օրը, Տերիօկում կը բացվի նրա յուշարձանը։ Բացումը մտադրութիւն կայ տօնելու հնարաւոր եղածին չափ հանդիսաւոր կերպով։ («Р.У.»)

◆ Ինչպէս յայտնի է, գրող Կուպրինը հիւանդ է և բժշկվում է Եսսենտուկիում։ Նրա հիւանդութիւնը գնալով վատթարանում է։ Նա այլ ևս դժուարանում է շարունակել գրական աշխատանքներն առհասարակ և մասնաւորապէս «Нищіе» պատմուածքը, որով վերջին ժամանակներս զբաղված էր գրողը։ («Вечеръ»)

◆ Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնը մի առաջարկութիւն է ներկայացրել մինիստրների խորհրդին 6 հարիւր հազար րուբլի լրացուցիչ գումար յատկացնելու երկաթուղային պահակներ վարձելու ու պահելու համար։

◆ Յուլիսի 2-ին, Պետերբուրգում, կենդանաբանական այգին է եկել իր սեփական աւտօմօբիլով իրաւունքների կանդիդատ Ն. Ն. Զվօրիկինը։ Մեքենավարը (շօֆֆերը) տիրոջ հեռանալուց յետոյ մտնում է գարեջրատուն։ Նրանց բացակայութիւնից օգտւելով մի ինչ-որ լաւ հագնված տղամարդ նստում է աւտօմօբիլը ու փախչում։ Մոտորը գնահատվում է 8000 ր.։

◆ Ներքին գործերի մինիստրութիւնը թոյլատրել է Պետերբուրգի գիմնազիական ընկերութեանը Պետերբուրգում հրաւիրել նոյեմբերի 14 ից մինչև 17-ը կայսրութեան գիմնազիական ընկերութիւնների համագումար։

◆ Վլադիվօստոկից հաղորդում են «Гол. Правды» լրագրին, որ խունխուզների յանդգնութիւնը չափ ու սահման չունի այլ ևս։ Զինված ռուսաց եռագծեան հրացաններով, բուռն ատելութիւն տածելով դէպի ռուսները, խունխուզները սարսափ են տարածում Վլադիվօստոկից մինչև Օլգա և Սուչանի հովիտը։ 50 հոգուց բաղկացած մի խումբ, որոնց թւումն են եղել, իբր թէ, 6 վրացիներ, մօտ ժամանակներս յարձակվել են Օլգինսկի ճանապարհի վրա գտնվող Իզմետևի տան վրա, գնդակահար են արել բանւորին, կնոջը, ծառաներին. սկսել են գնդակակոծել տունը, որի մէջ մնում են եղել երեք աղջիկներ, որոնք սպանվում են. անձանքներով մեռցնում են փոքրիկ տղային, տունը կողոպտում են և այրում։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Լևոն Ե. Լուսինեան, վերջին թագաւոր հայոց աշխատ. Կ. Բասմաջեանի, Պարիզ, 1908 թ.։

«Բանասէր» հանդէսի բազմաշխատ խմբագիրը և հայ հնագիտական բանասիրութեան մէջ իր անխոնջ աշխատութեամբ պատուաւոր դիրք գրաւած պ. Կ. Բասմաջեանը վերջերս հրատարակեց Պարիզում վերոյիշեալ երկասիրութիւնը, որ ոչ միայն նրա «գլուխ գործոցը» կարող է համարվել, այլև իբրև մի լուրջ և բազմակողմանի ուսումնասիրութ. որը, անկասկած, մի նոր ճոխ նուէր պէտք է մտցնէ հայոց պատմութեան գանձարանի մէջ։

Իր մանրակրկիտ և բարեխիղճ ուսումնասիրութեամբ Լուսինեան ցեղի և այդ ցեղի հայոց վերջին թագաւոր Լևոն Ե. Լուսինեանի (մինչև այժմ հայոց վերջին թագաւորին Լևոն Զ. կոչելը սխալ է եղել) մասին, Բասմաջեան լուսաբանել է ոչ թէ միայն Լուսինեան տոհմի պատմութիւնը, այլ հայոց պատմութեան ամբողջ շրջաններ, որոնց վերաբերմամբ մեր ունեցած տեղեկութիւնները մինչև այսօր թերատ էին, կցկտուր և սխալ։

Եւ այն անձինք, որոնք սատար են հանդիսացել պ. Բասմաջեանին, հաւաքելով ի յիշատակ հանգուցեալ Գաբրիէլ Էգնայեանի այն գումարը, որով կարելի է եղել հրատարակել այդպիսի մի մեծածախս և մեծ գիրք, զարդարուն գեղեցիկ պատկերներով և նկարներով, անշուշտ, դրանից աւելի լաւ յարգանք չէին կարող մատուցանել Էգնայեանի յիշատակին։

Չը նայելով որ գիրքը մասնագիտական է, բայց ես մեծ հաճութեամբ և յափշտակութեամբ կարդացի, մի ամբողջ երեկոյ նուիրելով ընթերցման, և նոյնը, անշուշտ, կանեն նրանք, որոնք հետաքրքրվում են հայրենի պատմութեամբ, հայ ազգի և բազմաչարչար Հայաստանի անցեալով։ Խորհրդածութեան ուղղակի առատ նիւթեր է ընծայում Բասմաջեանի աշխատութիւնը։

Հայ բանասէրը, հայ ինտելիգենտը, որ գիտէ ապրել իր ազգի ցաւերով և անցեալով, պէտք է ձեռք բերէ այդ գեղեցիկ աշխատութիւնը և կարդայ։ Այդ բաւական չէ, պէտք է որ ամեն մի հայ ինտելիգենտ ունենայ իր մատենադարանի մէջ այդ աշխատութիւնը՝ Ալիշանի «Այրարատ», «Սիսուան» աշխատութիւնների կողքին։

Բասմաջեանի գործը արժանի է ամեն տեսակ խրախուսանքի։

Հ. Առաքելեան

ՄԱՄՈՒԼ

Մեր ընթերցողները գիտեն, որ «Новое Время» թերթը վերջերս նոր արշաւանք է սկսել հայերի դէմ, իր գլխաւոր աշխատակից Մենշիկովի բերանով։ Կովկասում կատարված և կատարվող հակապետական բոլոր դէպքերի գլխաւոր պատճառը հայերն են, որոնց թիւրքերն ուզեցին մի քիչ պատժել, որոնք կարող էին վերջնականապէս զսպվել, եթէ միայն չը լինէր կոմս Վօրօնցով-Դաշկովի հաշտասէր, երերուն և հայանպաստ քաղաքականութիւնը։

Նոյնը և Թիւրքիայում. բոլոր չարիքների պատճառը, ըստ Մենշիկովի, դարձեալ այդ անիծեալ հայերն են, և սուլթան Աբդուլ-Համիդի բռնած ընթացքն ու քաղաքականութիւնը՝ իր սաղմի մէջ խեղդել յեղափոխական կամ ազատագրական որևէ շարժում՝ արժանի է միայն գովասանքի, խրախուսանքի և պէտք է բարի օրինակ հանդիսանայ ռուսաց կառավարութեան համար։

Մի խօսքով՝ «Новое Время» թերթի կարծիքով հայերը մի սոսկալի տարր են, որը պէտք է բնաջինջ անել՝ համաշխարհային խաղաղութիւնը ապահովելու համար։

Եւ այդ ամենը այն պատճառով, որ հայերի մէջ ևս, ինչպէս և վրացիների, զանազան տեսակ յեղափոխական կազմակերպութիւններ կան և մանաւանդ գոյութիւն ունի Դաշնակցութիւն կոչված կազմակերպութիւնը։ Այն հանգամանքը, որ հայ ժողովուրդն իր մեծամասնութեամբ ոչ մի բարոյական կապ չունի այդ կազմակերպութիւնների հետ, որոնք, ըստ Մենշիկովի, կազմում են վրաց կազմակերպութիւնների հետ Կովկասեան Մաֆիա, ոչ մի նշանակութիւն չունի ռուս հրապարակախօսի համար։

Եւ մեղաւորը, հայերին այդքան երես տուողը ինքը կովկասեան վարչութիւնն է եղել «յանձին Դոնդուկօֆների, Շերեմետևների, Մալամաների, Կրիմ-Գիրէյների, Շերինկինների, Պետերսոնների, Զուևկովսկիների և կոմս Վօրօնցօֆների, որոնցից թող Աստուած ազատէ ռուսներին, այլապէս պետական գործը կը կործանվի վերջնականապէս և Կովկասը կը կորչէ երկար ժամանակի համար»։

Եւ որպէսզի ռուսական պետական գործը չը կործանվի ու Կովկասը ձեռքից չը գնայ, Մենշիկով մի ուրիշ յօդուածով (տպված № 11583 ում) խորհուրդ է տալիս հեռացնել Վօրօնցով-Դաշկովին։

«Եթէ կոմս Վօրօնցով-Դաշկովը,—ասում է ռուս հրապարակախօսը,—լինէր մասնաւոր անձն, այն ժամանակ ոչ ոքի համար հետաքրքրական չէր լինի, թէ ինչ է մտածում այդ ազատամիտ պարոնը։ Իբրև մասնաւոր անձն, նա կարող էր անպայման բաշխել հայերին բոլոր իր հակապետական համակրութիւնները, որ դիզել են իր նախնիքը։ Նա կարող էր գրել աւազակների համար սահմանադրութիւն կամ խաղաղութեան աւետարան, պարտաւորեցնելով թիւրքերին համբուրվել հայերի հետ ամեն անգամ պատահելիս։ Ի մեծ ափսոսանս և ի մեծ թշուառութիւն Ռուսաստանի, կոմս Վօրօնցով-Դաշկով մասնաւոր անձն չէ, այլ Վեհապետի փոխանորդը, Ռուսաստանի ներկայացուցիչը։ Նրան են հաւատացել ռուսական ժողովրդի վեհապետական իրաւունքները ապստամբող երկրում։ Այդպիսի հզօրութեան ներկայացուցիչը պէտք է ներկայացնէ ույժ, յաղթութիւն, հրաման, օրէնք, և ոչ աւելի մեծահոգութիւն, քան թոյլ է տալիս լիակատար հպատակութիւնը։ Կոմս Վօրօնցով-Դաշկովը—մասամբ ազատամտութիւնից, մասամբ բարեսրտութիւնից և զառամութիւնից—հանդիսանում է Փոխարքայ ըստ էութեան ոչ թէ Ռուսաստանի, այլ տեղական բնիկների, Փոխարքայ՝ իր փոխարքաների—զանազան Պետերսոնների, Միցկևիչների, որոնց վրա հայերն ունեն, ինչպէս ասում են, մի ինչ-որ շատ պարզ, բայց դժուարահասկանալի հմայք»։

Եւ ուրեմն ճարը գտնված է Մենշիկովի ձեռքով…

Թող Աստուած ազատէ, կասենք մենք, Ռուսաստանն այնպիսի դատաւորներից, ինչպէս Մենշիկօֆն է։

Եւ եթէ Կովկասում, Թիւրքիայում բոլոր չարիքների պատճառը հայերն են, անշուշտ նրանք են դարձեալ բոլոր աղէտների և չարիքների պատճառը նաև Պարսկաստանում։

Հազիւ ոտքը կոխեց պարսկական հողի վրա «Новое Время»-ի աշխատակիցը, անմիջապէս հաղորդեց այդ գիւտը ռուսներին։ Բաւական էր նրա համար մի երկու օր մնալ Թաւրիզում և Ուրմիայում, որպէսզի նրա համար պարզ էր, որ հայերն այդտեղ ևս աշխատում են արտաքսել ռուսներին, որովհետև—ո՜վ սարսափ—ռուսաց բանկերի մէջ ծառայողները մեծ մասամբ հայերն են։

Բայց այդ նոր գիւտի մասին յաջորդ անգամ։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բագու, 3 յունիսի

Վերջին տարիներս մէկը միւսի ետևից տեղացող ճախորդ հանգամանքները մեր գիւղացուն կատարելապէս շշմեցրին։

Հողը դադարեց նրա ծով դարդերին բաւարարութիւն տալ։

Այդ սարսափելի դրութիւնից դուրս գալու համար նա դիմեց միջոցների, ի հարկէ, նախ ուշադրութիւնը դարձնելով պանդխտութեան վրա, ուր, նրա կարծիքով, «տեղով ոսկի» պէտք է լինէր…

Բոլոր իրար ետևից հիասթափեցնող փորձերը ստիպեցին նրան նորից դառնալ դէպի իր հողը։

Բայց նա գիտէ, որ հայրենիքում իր ունեցած հողը մէկ ու կէս թիզ է, այն էլ ցանածը նոյնիսկ չը տալով, ուստի նա մի ելք է գտնում,—գաղթել ուրիշ տեղ։

Սակաւահողութեան մէջ առաջին տեղը բռնելով Սիսիանը (նամանաւանդ Ուզ գիւղը), այժմ այնտեղ աւելի քան ուրիշ է ընկնում այդ շարժումը։

Օրինակ՝ Սիսիանի Ուզ, Ղարաքիլիսա, Աղքեանդ և այլն գիւղերում ցանկութիւն կայ գիւղացիներից մի մասին գաղթելու, բայց չունենալով ճշգրիտ ու հաստատ տեղեկութիւններ ազատ ու պտղաբեր հողերի մասին, մնացել են ձեռքերը ծալած։

Սրանով դիմում ենք այն հիմնարկութիւններին ու անհատներին, որոնց սրտին մօտ է գիւղացու ցաւը, չը զլանալ տալու իրանց տեղեկութիւնները ու ցուցմունքները ազատ ու յարմար հողերի մասին, որ քիչ բարերարութիւն արած չէին լինի մեզ։

Ուզեցի Յակովբ

Յ. Գ.—Տեղեկութիւնները խնդրում ենք տալ մամուլի միջոցով և կամ նամակով, հետևեալ հասցէով՝

Баку, Общественное Собраніе, Хачатуру Вартанянцу.

—

Թիֆլիս, 8 յուլիսի

Խնդրում եմ թոյլ տալ «Մշակ» լրագրի մէջ զետեղելու իմ ներկայ բացատրութիւնը մի հարցի առիթով, որտեղ շօշափված է իմ պատիւը։

Անցեալ 1907 թւին վաճառականական իմ գործերով ես գնացել էի Մոսկվա։ Տեղական թերթերից մէկի մէջ կարդալով «Россія» ընկերութեան յայտարարութիւնը, շուտ գործող մեքենաների մասին, հետաքրքրութիւնից դրդված գնացի ընկերութեան գրասենեակը։ Ընկերութեան անդամները ուշադրութեան առնելով իմ առանձին հետաքրքրութիւնը, ամենայն ինչ մանրամասն բացատրելուց վերջը, փորձնականապէս ինձ համոզեցին, որ այդ մեքենան կէս ժամում գործում է մի զոյգ գուլպայ։

Մանրամասն ծանօթացնելով թէ մեքենաների և թէ ընկերութեան պայմանների հետ՝ խնդրեցին իմ ներկայացուցչութիւնը Կովկասի համար։ Առանց տատանվելու, միանգամայն յափշտակված այդ օգտաւէտ գործերը Կովկաս մտցնելու մտքով և ցանկանալով շատերին հնարաւորութիւն տալ իր յարկի տակ օրական 1—2 րուբլի աշխատելու, ուրախութեամբ յայտնեցի իմ համաձայնութիւնը, որից յետոյ ընկերութեան հետ պայմանաթուղթ գրեցի և 9 հատ մեքենայ ինձ հետ վերցնելով վերադարձայ Թիֆլիս։

Իսկ չը հետաքննելով այդ հսկայական «Россія» ընկերութեան ապագայում տեղի ունենալիք կեղծիքներն ու քայքայումը, Թիֆլիսում ես ինձ համար վատան կերպով գրասենեակ եմ վարձում, յայտարարութիւններ տալիս և այդպիսով գործ սկսում։

Մի դժբաղդ օր ինձ յայտնում են, որ այդ ընկերութիւնը քայքայվեց և պարագլուխներն էլ անյայտացան Մոսկվայից։ Մեքենայ առնողներից մի քանիսը սկսում են տրտնջալ ու գանգատվել, թէ ինչու՞ գործը չէ շարունակվում։ Ի հարկէ գտնվում են մարդիկ, որ սկսում են աջ ու ձախ դըրգել, պղտոր ջրում ձուկ որսալու նպատակով, ու գանգատաւորների թիւը շատացնել։

Պարոնայք մեքենայ առնողներ, ամբողջ իմ ներկայացուցչութեանս ժամանակընթացքում ես վաճառել եմ ընդամենը 30 մեքենայ և ոչ 170, ինչպէս այդ տպված էր «Վտակ» թերթի № 140 ի լրատու բաժնում։ Իմ այդ մեծ բաւականութեանս համար «Россія» ընկերութիւնը որոշել էր ինձ տալ ամեն մի վաճառված մեքենայի համար 10 ական ր., և այդպէս հաշւի չառնելով ոչ մի ծախս, կը նշանակէ՝ ես պէտք է օգտվէի 300 ր.։ Նոր ստանալիք մեքենաների համար կանխավճար եմ տուել 525 ր., որը, ի հարկէ, գնաց կորաւ։ Չը նայած այս խաչոր եղելութեանը՝ ես պատրաստ եմ դատարան դիմողներին վերադարձնել այդ իմ ստացած 10-ական րուբլիները ի պատիժ ինձ, որ ես չը հետաքննեցի այդ ընկերութեան խարդախութիւնը։

Այս բոլորից յետոյ ես ինձ նոյնչափ խաբված և աւելի մեծ չափով նիւթապէս, թէ բարոյապէս տուժած եմ զգում, որչափ զգում է իրան իւրաքանչիւր մի մեքենայ առնող։

Գրիգոր Յարութիւնեան Բօյախչեանց

—

Բագու, 22 յունիսի

Ինչպէս յայտնի է, Ղարաբաղի թեմի առաջնորդ Աշոտ եպիսկոպոսը անցեալ տարի եկաւ Բագու և թեմակ. դպրոցի անունով ժողովեց 24,000 ր.։ Նուիրատուները և նոյն իսկ բոլոր ղարաբաղցիները ուրախ էին, որ դպրոցը ապահովվում է։ Սրբազանը փողերն առաւ ու գնաց. անցան շաբաթներ, ամիսներ, բայց հաշիւ չը տուեց։ Քանիցս բանաւոր և գրաւոր մամուլի միջոցով հաշիւ պահանջվեց նրանից, բայց ի զուր։ Ուսումնարանի բարձր դասարանները փակվեցին, աշակերտները փողոց նետվեցին, անցաւ և տարին, և ահա յանկարծ դուրս եկաւ հոգաբարձու Մելիքեանի կողմից մի ընդարձակ գրուածք, որը հաշիւ կոչվելուց շատ հեռու էր և որը կազմված էր, կարծես, Աշոտ եպիսկոպոսին գովելու համար։

Մելիքեանը գրում է, թէ այդ փողերը եպիսկոպոսը որոնցից է ստացել, թէ՝ հոգաբարձութեանն է յանձնել և այլն, բայց մոռանում է, որ մեզ հարկաւոր է մանրամասն հաշիւ, որից կարելի լինի իմանալ, թէ այդ փողերը ինչի վրա է ծախսվել, եթէ դասարանները կրճատվել են։

Ասում են, որ այդ փողերի մի մասը ծախսվել է առաջնորդարանի վրա. ասում են, որ այդ փողից 700 ր. գտնվում է հոգաբարձուներից մէկի մօտ առաջնորդի գիտութեամբ. ասում են, որ հոգաբարձութեան անդամներից մէկը, հազարներ պարտ լինելով ուսումնարանին, չէ բարեհաճում վճարել իր պարտքը և մուրհակը փրկել, այլ առաջնորդին սրա-նրա դռներն է գցում. ասում են, որ հոգաբարձութեան նոյն անդամը 10,000 ր. վերցրել ու բացակայել է Շուշուց, և հոգաբարձութեան մի այլ անդամի՝ բնակչութեան համար «սուտկան» 6 րուբլով ուղարկել են բացակայողի մօտ, իսկ ուղարկվողը ամսով չէ վերադարձել։ Եւ այսպիսի շատ բաներ են ասում…

Հասարակութեան շրջաններում պտտող այս առեկօսէները վերացնելու համար՝ ցանկալի էր, որ Աշոտ եպիսկոպոսը գէթ այս անգամ մանրամասն հաշիւ ներկայացնէր և բաւարարութիւն տար հեռու երկրում ապրող ղարաբաղցիների միանգամայն տեղին հետաքրքրութեանը, որը սպառնում է զայրոյթի բնաւորութիւն ստանալ, եթէ էլի կը շարունակվի հաշւետուութեան միտումաւոր բացակայութիւնը։

Վարանդեցի

—

Թիֆլիս, 4 յուլիսի

«Մշակ», «Тифлисскій Листокъ», «Закавказье» և այլ թերթերում տպված էին, որ Թիֆլիսի կօնսիստորիայի ամբողջ կազմը—արք. նախագահը և բոլոր անդամները—ենթարկված է կատարված զեղծումների համար քրէական դատի։ Դատին ենթարկված անդամների թւում յիշվում է և Երզնկեան քահանայ։ Յայտնում եմ, որ կօնսիստօրիայի անդամ երբէք չեմ եղած, ուրեմն և չէի կարող դատի ենթարկվել նրա գործերի համար։

Խնդրում եմ տպագրել երկտողս յարգելի «Մշակի» առաջիկայ №-ում հասարակութեան մէջ պտտող թիւրիմացութիւնները փարատելու համար։

Վանքի աւ. եկեղեցու՝

Եղնիկ ա. ք. Երզնկեան

—

Թիֆլիս, 10 յուլիսի

Ես շարունակ ստանում եմ թէ մասնաւոր անձերից և թէ բաժանորդներից հարցմունք, թէ երբ պէտք է լոյս տեսնէ իմ կազմած Հանրագիտական բառարանը։ Այս առիթով հարկ եմ համարում յայտնել հետևեալը։

Ես ձեռնարկեցի Հանրագիտական բառարանի կազման 1904 թւին։ Իմ ծրագրով նա պէտք է բաղկացած լինէր 2000 էջերից (սիւնակներից) և պարունակէր մօտ 500 պատկերներ ու երկու մասն—համաշխարհային և հայկական-վրացական։ Տպագրութիւնը սկսվեց 1904 թւի աշնան և ես յոյս ունէի աւարտել 1905 թ. ընթացքում։ Սակայն այդ ժամանակվայ դէպքերը՝ հայ-թուրքական ընդհարումները, յեղափոխական շարժումները, իմ ծանր զբաղմունքները՝ թէ լրագրական և թէ իբրև քարտուղարի նպաստամատոյց յանձնաժողովի և ճանապարհորդութիւններս այդ առիթով, միւս կողմից «Հերմէս» տպարանի (ուր տպվում էր բառարանը) գործադուլները և լիկվիդացիան պատճառ եղան, որ տպագրութիւնը ընդհատվեց դեռ 1905 թ. սկզբին և կարելի եղաւ տպագրել միայն Ա. տառը (էջ 1—190)։

Միայն անցեալ 1907 թ. հոկտեմբերից հնարաւոր եղաւ ինձ վերսկսել բառարանի տպագրութիւնը «Էպօխա» տպարանում և անընդհատ առաջ վարել այդ տպագրութիւնը։ Այդ օրից մինչև այսօր արդէն տպվել է 37 Ճաբօր կամ 1184 էջ, պարունակող Ա—Կ տառերը։

Աշխատութեան ընթացքում գործը աւելի լայն ծաւալ ստացաւ և ես տեսայ, որ խոստացածից (2000 էջ—սիւնակ) աւելի պէտք է լինի նա, մօտաւորապէս 3000 էջ, որ կը ստիպէ ինձ կազմել ոչ թէ մի հատոր, ինչպէս մտադիր էի, այլ երկու, ամեն մի հատորը բաղկացած 1500 էջերից։ Որովհետև առաջին հատորից արդէն տպված է 1184 էջ, ուստի յուսով եմ մինչև առաջիկայ նոյեմբեր աւարտել առաջին հատորը և ուղարկել բաժանորդներին, իսկ երկրորդ հատորը, որ կը պարունակէ նոյնպէս 1500 էջ, երևի կաւարտվի 1909 թւի ընթացքում։

Այդ պատճառով այն բաժանորդները, որոնք չեն ցանկանայ մի քիչ էլ սպասել, կարող են, ի հարկէ, յետ պահանջել իրանց վճարած գումարը, միայն այդ դէպքում նրանք պարտաւոր են վերադարձնել ինձ արդէն ստացած տպված թերթերը, շապիկը և կազմը։ Չը նայելով որ գիրքը խոստացածից աւելի մեծ ծաւալ պէտք է ունենայ, բաժանորդների համար գինը չեմ աւելացնում, բայց աւարտումից յետոյ գինը, ի հարկէ, նոյնը չի լինի, այլ 4 րուբլու (կամ կազմով 5 ր.) փոխարէն կը լինի 6 և 7 րուբլի։

Հ. Առաքելեան

—

Թիֆլիս, 11 յուլիսի

Լրագիրներում հրատարակվեց իմ դժբաղդ որդի ուսանող Յովսէփ Իվանեանի անձնասպանութեան մասին, որտեղ ի միջի այլոց շեշտվում էր որպէս թէ բարեկամների ասելով մտաւոր հիւանդութիւն է ստացել վերջերս։

Սրանով յայտնում եմ, որ բոլորովին սխալ է և չարամիտ անձանց հնարված վիրաւորանք է դէպի հանգուցեալը, նա մինչև վերջին րոպէն եղել է մտաւորապէս կատարեալապէս առողջ։ Խնդրում եմ միւս թերթերին արտատպել սոյն երկտողս։

Վշտահար մայր

—

Գանձակ, 8 յուլիսի

Խորին շնորհակալութիւն ենք յայտնում բագուաբնակ օր. օր. Սոֆիա Պետրոսեանին և Եղիսաբէթ Տէր-Ստեփանեանին, որոնց նախաձեռնութեամբ վաճառվել են Գանձակի Չուլհականոցում գործված իրերը, որի վաճառումից գոյացած 160 ր. 30 կ. գումարը շնորհակալութեամբ ստացել ենք։

Նոյնպէս մեր շնորհակալութիւնն ենք յայտնում և Բագուի կուլտուրական միութեանը, որ թոյլ է տուել անցեալ ապրիլի 5—6-ի երեկոյթում յիշեալ իրերը վաճառքի հանել։

Շնորհակալութիւն ենք յայտնում և այն անձանց, որոնք որևէ կերպ նպաստել են վաճառման աջողութեանը։

Չուլհականոցի կառավարչուհի՝
Եղիսաբէթ Նաբաթեան
Խորհրդի անդամուհիներ՝
տ. Մարիամ Նաբաթեան
տ. Եկատերինէ Նանասեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

Պարիզ, 9 յուլիսի (ն. տ.)

Ֆրանսիացիների կեանքը բազմաբովանդակ է. ֆրանսիացին, ինչպէս երևում է հենց պարիզաբնակներից, ամեն ինչ է՝ համ նացիոնալիստ, համ սօցիալիստ, համ ծայրայեղ դեմօկրատ, համ սինդիկալիստ և համ ամեն ինչ։

Սակայն այդ բոլոր քաղաքական «հաւատամք»-ները ի մի ձուլելով եթէ կաթսայի մէջ եփելու լինենք, մի «հաւատամք» կը ստեղծվի, այն է՝ ծայրայեղ շօվինիզմ։

Անցեալները պարլամենտում ձայների անհամեմատ մեծամասնութեամբ որոշվում է հասարակապետութեան նախագահի ճանապարհորդութեան համար 400,000 ֆր. Շվեդ-Նորվեգիա, Դանիա և Ռուսաստան այցելելու։

Սօցիալիստ պատգամաւորներից մէկը, Վայանը, առաջարկում է պարլամենտին 50,000 ֆրանկի իջեցնել այդ գումարը, պարզ այն պատճառով, որ նախագահը Ռուսաստան չը գնայ։ Նոյն սկզբունքը պաշտպանում են մի շարք սօցիալիստ պատգամաւորներ։ Սակայն վերջիններիս թիւն այնքան քիչ է, որ վիճաբանութեան նիւթ անգամ չէ առնվում։

Սօցիալիստ պատգամաւորները ժողովներ հրաւիրեցին և յայտարարեցին, թէ այդ առիթով պիտի ճառախօսեն, և հրաւիրեցին լրագրական էջերից, առանձին կոչերով ու թռուցիկներով։

Այդ երեկոյեան հետաքրքրութեանս բաւարարութիւն տալու համար ինքս էլ գնացի։

Սակայն որքան զարմանք, երբ հազիւ էին հաւաքվել 3,000,000 բնակիչ ունեցող Պարիզի ազատ ժողովրդից ընդամենը 400 հոգի… Եւ աւելի զարմանալին այն էր, որ այդ չնչին թիւը պատկանում էր զուտ բանւոր դասակարգին։ Մի թիւ, որ Բագուի մի նաւթահանքն ունի, կամ Թիֆլիսի մի ծխախոտի գործարանը։

Ժողովը բացեց Սենի դաշնակցութեան քարտուղար Լաւօն։

Առաջին ճառախօսն եղաւ Պարիզ հրատարակվող «Ռուսական բեմի» խմբագիր և ռուս. ս.-դ. տեղիս ներկայացուցիչ Րուբանովիչը։

Վերջինս մօտ մի ժամ խօսելով, ամբիոն բարձրացաւ պատգամաւոր Ալլար, ապա Վայան, Սըմբա և այլք։

Ճառախօսների ընդհանուր տրամադրութիւնն այն էր, որ չէին ցանկանում, որ ազատ Ֆրանսիայի ներկայացուցիչը՝ նախագահը այցելութիւն տայ Ռուսաստանին, որն՝ ինչպէս պատգամաւոր Ալլարն ակնարկեց, 160 հազար ժողովուրդ ունի բանտերում և այլն և այլն։

Երբ ունկնդիրների թւի քչութեան համար հարց տուի մի ֆրանսիացու, նա պատասխանեց. «…Այո, Ֆրանսիան ազատ երկիր է, կուլտուրական է և նրա մէջ ապրող բնակիչը, բայց որովհետև մեր ազգի, ֆրանսիացու հայրենիքի շահը պահանջում է, որ սերտ կապ ունենայ ռուս կառավարութեան հետ, իսկ այդ պատգամաւորների ճառերը վնասաբեր են ֆրանսիացու համար, նա չը կամեցաւ այցելել, լսել ճառախօսներին։ Քաղաքական աշխարհում մեր միակ ապաւէնը Ռուսաստանն է, որի հետ յանուն մեր հայրենիքի ու ազգի միջև սերտ յարաբերութիւն պիտի պահենք…»

*

Պարիզում կան մօտ երկու հազար հայեր, որոնց մի մասը ուսանող և ուսանողուհիներ է, մեծ մասամբ թիւրքահայեր, մի մասը առևտրական դասին պատկանողներ, գրագէտներ և այլն։

Այստեղ է և Մինաս Չերազը, որը վերջերս դադարեցրել է իր «L'Arménie» լրագիրը և ոչ մի պարապմունք չունի։

Պ. Չերազը դեռ թարմ է, ծերութեան նշաններ չը կան դէմքի վրա, կարող է գործել, սակայն, ինչպէս պատմում են պարիզաբնակ հայերը, խիստ յուսահատված է իրան համարում տեսնելով մի շարք իր հասակակից գործիչների՝ անտակտ ու անկօրեկտ վարմունքը։

Ուսանողութիւնը ունի իր ուսանողական միութիւնը։ Այդ միութիւնը ունի իր գործունէութեան շրջանակը դպրոցական չորս պատերի մէջ. միութեան միակ նպատակն է օգնել միջոցներից զուրկ ուսանողներին։

Քաղաքական կամ այլ հարցերով զբաղվողներին Թիւ չը կայ:

Հայկական կեանքը կատարելապէս մեռած է:

Երբ այստեղ եղող մի ուսանողի հարց տուինք, թէ ինչու հայ գրականութեամբ չեն զբաղվում, ինչու նախկին ուսանողների պէս արտասահմանեան կեանքից բրօշիւրներ, պատկերներ չեն գրում կամ թարգմանում Կովկասի հայերի ընթերցանութեան համար, որոնք կարդում են զանազան առասպելներ հայ Թուրքական կոտորածներից և այլն, իսկ կուլտուրական ֆրանսիացու գրուածքը միմիայն Ֆրանսիայումն էլ մնում է,—նա պատասխանում է, թէ «նախ դասերով ենք զբաղված, երկրորդ՝ Պարիզը այնքան մեծ է, որ ուսանողները իրար մօտ այցելել չեն կարողանում, իրարից հեռու են ապրում»:

Ի հարկէ, դա արդարանալու պատճառ չէ:

Տեղիս հայերի մէջ եթէ փոքր ի շատէ հայութեան նշան, գիտակցութիւն կայ, այդ էլ Թիւրքահայերի մէջն է: Ռուսահայերը արտասահման անցնելով փոխանակ սովորելու, մարսելու ազատ երկիրների ազատ բնակիչների սովորութիւնները, նախ անպատուաբեր են համարում հայերէն խօսել, երկրորդ՝ իրանց հայ անուանել:

Ֆրանսիացին, ինչպէս հեռուից էինք լսում, իբր թէ ոչ հոգևորականութիւն է ճանաչում, ոչ եկեղեցի և ոչ էլ ազգի խտրութիւն է դնում: Դա միանգամայն պատուական հեքեաթ է:

Պարիզի ֆրանսիական եկեղեցիների գմբէթների գլխին նախ հայ և ռուս եկեղեցիների նման խաչ է դրված, իսկ խաչի գլխին, որ ազգասիրութեան մեծ նշանն է, աքաղաղ է կանգնեցրած ոսկեզօծ գոյնով:

Աքաղաղը Ֆրանսիացոց ազգային զինանշանն է, որ Քրիստոսի՝ մեծ յեղափոխականի նշանաբանի ոչ թէ շարքում են դնում, այլ ազգասիրաբար խաչից վերև, խաչի գլխին:

Ֆրանսիացին, այն էլ Պարիզում, յայտնի Ժօրէսի մի լրագիրը ապահովել չէ կարողանում. ազատ ֆրանսիացիները Պարիզում միմիայն այնքան հոգի են, որքան ամբողջ հայ ազգը Ռուսաստանում, Թիւրքիայում, Ամերիկայում, Հնդկաստանում և Պարսկաստանում: Սակայն ամենօրեայ մի սօցիալիստական օրգան ֆրանսիական 40 միլիօն ժողովուրդը պահել չը կարողանալով Կովկասի հայերն են օգնում նրան, հայեր, որ ոչ միայն միջակ դասակարգին պատկանող ֆրանսիացու չափ չեն հասկանում, այլ Պարիզի կառապանները կուլտուրապէս հայերից բարձր են կանգնած:

Ժօրէսը հարուստ է, նա ահագին կարողութիւն ունի, սակայն իր թերթի վրա իր սեփական ունեցածը չէ ծախսում, այլ պահանջում է հասարակութիւնից, իսկ իր ունեցած կարողութեան համար պատասխանում է, թէ իրը առանց այն էլ համայնական է...

Հայերս դեռ ֆրանսիացի լինելուց շատ ենք հեռու, գուցէ 3—4 հարիւր տարուց յետոյ. իսկ այժմ միայն այլասերվում ենք:

Ս. Գարագաշ

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻՑ

Վերջերս Եգիպտոսում տեղական իսլամ և ղպտի ժողովուրդների մէջ մի վէճ է ծագել և երկու ազգերի մամուլը սաստիկ զբաղված է այդ հարցով:

Այդ վէճի առիթով «Լէվա» թերթում, ի միջի այլոց, տպված է հետևեալ հատուածը, որ արտատպում ենք «Արև» լրագրից, ղպտիների դէմ.

«Իսլամն է, ո՛վ ղպտիներ, որ ձեզ յոյներուն ձեռքէն ազատած է դարաւոր գերութենէ մը ետքը: Այն ատեն իրենց տիրոջ ձեռքին մէջ եղող անասուններուն պէս էիք: Ձեզ կը նախատէին, ոտքի հարուածով կը ծեծէին և ձեզ ստորին գերիներու տեղ կը դնէին:

«Յոյներուն երթալէն ետքը իսլամին թևերուն մէջ նետուեցաք: Այն ատեն ձեր արիւնը խնայուեցաւ, ձեր կիները և զաւակները յարգուեցան: Եթէ իսլամը այնպէս ըլլար ինչպէս դուք կըսէք, ձեզ պիտի ջախջախած ըլլար, ձեր մնացորդները ասդին անդին ցրուած պիտի ըլլային, և երկիրը ձեր ազատ երեսէն մաքրած պիտի ըլլար: Ձեր լեզուն պիտի քաշէր բրցնէր, որպէսզի չկրնայիք խօսիլ, և ձեր մատները պիտի կտրտէր, որպէսզի չկրնայիք գրել:

«Տասներեք դար իսլամի երկրին մէջ մնացիք: Եթէ ասոր քառորդը անգլիացիներուն հետ անցունէիք, Ամերիկայի կարմրամորթ վայրենիներէն տարբերութիւն չպիտի ունենայիք և ձեր վիճակը պիտի հաւասարէր անասուններու վիճակին: Եթէ Քօնգօյի Լէօփոլդ թագաւորի հպատակներուն տեղը ըլլայիք, ձեր մազերը պիտի գործածէին պարաններ շինելու համար, ձեր մորթովը հողաթափներ պիտի շինէին և ձեր մարմինը խարազանուէր»:

Կահիրէի «Piramide» թերթը, խօսելով այս յօդուածի մասին, ասում է.

«Ամենաազդու կերպով կը բողոքենք այս գրուածքին դէմ և կը խնդրենք Եգիպտոսի լուսաւորեալ մասէն և մեր պաշտօնակից «Լէվայէն», որ պէտք եղածին պէս նշաւակեն այդ տեսակ պոռոտախօսութիւնները: Եթէ ասիկա չընեն, արդարացուցած պիտի ըլլան անգլիացի զօրքերուն ներկայութիւնը Եգիպտոսի մէջ»:

Արաբական թերթերը մի որոշում են հրատարակել, որը եգիպտ. ազգայնական կուսակցութիւնը յայտնել է ղպտի և արաբ մամուլի մէջ ծագած կատաղի բանակռիւների մասին.

«Ազգայնական կուսակցութեան գործադիր մարմինը հետևեալը որոշեց.

«Նկատելով որ մահմեդականներու և ղպտիներու համաձայնութեան սկզբունքը մին է այն սկզբունքներէն զոր հաստատած է հանգուցեալ Մուսթաֆա փաշա Քամէլ, կուսակցութեանս հիմնադիրը, և որ ընդունուած է կուսակցութեան ընդհանուր ժողովին կողմէ,

«Նկատելով որ գիտակից ղպտիները և մահմեդականները համաձայնելու տրամադիր են, մանաւանդ պատճառ մը չկայ որ արդարացնէ Եգիպտոսի երկու տարրերու միջև եղած բանակռիւը,

«Ազգայնական կուսակցութիւնը կը յայտարարէ բոլոր ազգին, առանց կրօնքի զանազանութեան, թէ ոևէ երկպառակութիւն չկայ ազգը կազմող երկու տարրերու միջև և թէ ոևէ թերթ կամ անձ որ կը ջանայ միտքերը գրգռել կրօնքի կամ եգիպտական ցեղի մը դէմ, կամ այնպիսի գործ մը կընէ, որ եգիպտացիներու միջև երկպառակութիւն կրնայ յառաջ բերել, ինք առանձին պատասխանատու է իր արարքներուն և թէ լոկ իր անձնական գաղափարներն է որ կը յայտնէ:

«Ազգային կուսակցութիւնը ուրեմն ձեռք կը կարկառէ բոլոր եգիպտացիներուն, ղպտի կամ մահմեդական և կամ հրէայ, և զանոնք կը հրաւիրէ իրեն միանալու, պահանջելու համար ազգին բռնաբարուած իրաւունքները, և ամենէն ալ կը խնդրէ, որ վերջացնեն այս բանակռիւը»:

«Ալ Գարիդան» գրում է.

«Բանակռիւը այնքա՛ն կատաղի դարձաւ թերթերուն միջև, որ իրենցմէ շատերը չկրցան յարգել քաղաքավարութեան օրէնքները: Խորին ցաւով կը հաստատենք իրաց այս վիճակը, քանզի մեր խմբագիրները այս կերպով մազ մնաց պիտի փճացնէին մեր երկրի համբաւն և պիտի հայթայթէին մեր թշնամիին մեր անկարողութեան մասին ապացոյց մը, ինչ որ յառաջ պիտի բերէր մեր ամենէն նուիրական պահանջումներուն մերժումը»:

«Լէվայի» այլանդակ յօդուածից յետոյ ահաւասիկ նմանօրինակ մի գրութիւն էլ, որ հրատարակված է «Ալ Սաէքա» արաբական թերթում:

«Ո՛վ մորակի զաւակներ և գաւազանի գերիներ, միթէ այս է ծառաներու քաղաքավարութիւնը իրենց տէրերուն նկատմամբ, և գերիներու դիրքը թագաւորներու հանդէպ: Կը վայլէ՞ որ գերին իր տիրոջ ունեցածին կէսը պահանջէ, որ ընկեր ըլլալ ուզել է անոր գործերուն, և անոր խորհրդակիցը ըլլայ. և այս բոլորը, որովհետև տէրը իր բարձր բարեացակամութեամբ իր գերիին շնորհած է վիճակ մը որ մտքէն անգամ չէր անցուներ ունենալ:

«Ինչ որ ամենէն աւելի սոսկալի է, սա է թէ տիրոջմէն ողորմութիւն կը խնդրէ, որպէսզի անկէ մեծ ըլլայ, հակառակ կրօնքի և հաւատքի տարբերութեան: Եթէ ասիկա կարելի ըլլայ ընդունիլ, ղպտիներուն ներելի պիտի ըլլայ գաւառներու կառավարչութիւնը պահանջել, այնպէս որ երբ վեհապետը, քաղաք մը այցելած ատեն, մզկիթի մը մէջ աղօթելով ըսէ. «Աստուած մեծ է, յանուն բարի և գթած Աստուծոյ, Աստուած մի և հզօր, ո՛չ ծնեալ և ո՛չ ծնունդ տուող»,—անդիէն ղպտի միւդիրը պիտի սաղմոսերգէ. «Հայր մեր որ յերկինս էք, յանուն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, ողջոյն»:

«Կը կարծեմ որ եթէ խըդիվական գահը երաշխաւորուած չըլլար կայսերական ֆերմաններով և միջազգային դաշնագրութիւններով և պաշտպանուած չըլլար իսլամական ազգին սուրովը, ձեր անկուշտ ախորժակը և ձեր անկրթութիւնը զձեզ պիտի մղէր այդ գահը պահանջելու, ձեր Գիրգիսին, ձեր Բուտրոսին և կամ ձեր Մաքարիին համար:

«Հաւանական է նաև որ օր մը երկու վեհապետ ուզէք, մէկը մեզի և միւսն ալ ձեզի համար...»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳԼԻԱ

«Աշխարհիս ամենամեծ դիպլոմատը».—Այդ դիպլոմատը, ինչպէս որ անուանել է Լօնդոնի ֆրանսիական դեսպան Կամբօնը, անգլիական թագաւոր Էդուարդ VII-ն է:

Այդ տեսակ մի բնորոշում տալու շարժառիթ է ծառայել անգլօ-ֆրանսիական համաձայնութիւնը հաստատելու տարեդարձը տօնելը Լօնդօնում: Բանկետից յետոյ կենաց բաժակը առաջարկելով, ֆրանսիական դեսպան Կամբօնը ասել է.

«Անգլօ-ֆրանսիական բարեկամութիւնը միշտ այն չէ եղել, ինչպէս, ինչ որ այժմս ենք տեսնում: Ամենքը, անկասկած, ցանկանում էին, որ Ֆրանսիայի ու Անգլիայի միջև հաստատվէին բարի սօցիալական և տնտեսական յարաբերութիւններ, բայց սերտ բարեկամութիւն ստեղծելու մասին հազիւ թէ յոյս էին տածում: Ես յիշում եմ այն ժամանակ, երբ կարծում էին, որ «entente cordiale»-ի կուսակիցները արդէն շատ են առաջ անցել, աւելի առաջ անցել քան նեղուցի երկու ափերում ընկած երկիրների հասարակական կարծիքը:

«Խոստովանում եմ, ես էլ այդպիսի յոռետեսներից մէկն էի, և այժմ ուրախութեամբ յիշատակում եմ, որ «entente cordiale»-ը ինձանից աւելի հեռատես գտնվեց: Բոլոր բարեմիտ տարրերը նեղուցի այս ու այն կողմերում երբէք չէին կասկածում, որ այդ վեհ շարժումը Անգլիայում ու Ֆրանսիայում կիրագործվի այդչափ աջող կերպով»:

Ապա «կենաց» խօսքերը ուղղելով թագաւորին, Կամբօնը անուանեց Էդուարդ VII-ին «ամենամեծ դիպլոմատը աշխարհիս»:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

ՎԻԵՆՆԱ, 10 յուլիսի: «Կորրէսպոնդէնց-Բիւրօ» լրագրին հեռագրում են Ցէտինեից, որ իշխան Նիկոլայ ներումն շնորհեց ռումբեր բերելու համար մահվան պատժի դատապարտված Վասօին, Զուլաֆիչին և ուսանող Վօյվօդիչին:

Մինէնիցկի-Վիշնեվեցկի պերեգօնում երեք կողոպտիչներ գիշերով մտան առաջին կարգի վագօնը կողոպտելու նպատակով: Նախասենեակում հանդիպելով կօնդուկտօրին և առաջնորդին, նրանք կրակեցին և սպանեցին առաջինին, ծանր վիրաւորեցին երկրորդին, ապա կանգնեցրին գնացքը և փախան:

ԿԻԵՎ, 9 յուլիսի: Համառուսական միսիօնարական համաժողովին մասնակցելու համար ժամանեցին սինօդի օբէր-պրօկուրօր Իզվօլսկի, Մոսկվայի միտրօպօլիտ Վլադիմիր, Պետերբուրգի միտրօպօլիտ Անտօնիյ և շատ արքեպիսկոպոսներ և միսիօներներ: Տեղի են ունենում նախապատրաստական յանձնաժողովի նիստերը: Համաժողովի նախագահն է Վօլինի արքեպիսկոպոս Անտօնիյ:

ԼՕՆԴՕՆ, 10 յուլիսի: Համայնքների ժողով: Հնդկական բիւդժէտը քննելու ժամանակ Հնդկական գործերի պետական քարտուղարի օգնական Բիւկինէն երկրի ֆինանսական և տնտեսական դրութիւնը անուանեց նպաստաւոր: Յայտնի չէ թէ արդեօք ընդարձակ ճիւղաւորութիւն ունէր նորերս Կալկաթայում բացված ռումբականների դաւադրութիւնը, յամենայն դէպս չէ կարելի չափազանցնել այդ գործի նշանակութիւնը: Կառավարութիւնը ամեն միջոցներ ձեռք կառնի, որպէսզի արմատախիլ անէ քաղաքական դժգոհութեան այդ անպատշաճ ձևը: Սակայն նկատվում են քաղաքական անհանգստութեան ուրիշ նշաններ, որոնք գտնվում են անիշխանականների ռումբերի ազդեցութիւնից դուրս: Դժուար է կուռ միջոցներ գտնել նրանց հետ: Կառավարութիւնը քննում է ոչ միայն... (աղաղակումն) սահմանադրական, այլ և վարչական րէֆօրմներ: Ի հարկէ, դրանք չեն կարող բուժել հնդկական բոլոր ցաւերը, բայց նրանք մասամբ կը նպաստեն այն բանին, որպէսզի բաւարարութիւն տան տնտեսական հասարակութեան նշանաւորագոյն դասի ցանկութիւններին:

ԿՎԵԲԷԿ, 10 յուլիսի: Ուէլսի իշխանը ժամանեց այստեղ մասնակցելու Կվէբէկ քաղաքի երեքհարիւրամեակի առիթով տօնախմբութիւններին:

ՆԻՒ-ԵՕՐԿ, 10 յուլիսի: Կարակասից հեռագրում են, որ նախագահ Կաստրօ դուրս քշեց նիդէրլանդական դեսպան Դէրէյսին: Վենէցուէլական արտաքին գործերի մինիստրը դեսպանին ուղարկեց անցագիր և մի յայտագիր, հետևեալ բովանդակութեամբ. «Ի նկատի ունենալով այն հայհոյանքները, որ արտայայտել է Դէրէյսը մարտի 27-ից Կաստրօյին ուղարկած նամակի մէջ, Կաստրօ նրան անյարմար է համարում բարեկամական մտքով գործելու որպէս միջնորդ Վենէցուէլիայի և Նիդէրլանդիայի միջև»: Նիդէրլանդիայի դեսպանի նամակը մարտի 27-ից ըստ երևոյթին պատասխան էր նախագահ Կաստրօի Հոլլանդիային արած պահանջին՝ արթնութեամբ հսկել Լագուայրայի և Կիւրասօի միջև շրջող հոլլանդական նաւերի վրա, որովհետև այդ նաւերում յաճախ օտար անուններով թագնվում էին վենէցուէլական յեղափոխականները:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 յուլիսի: Թագաւոր Կայսրին բախտ ունէին ներկայանալու՝ յուլիսի 9-ին—Պարիզի ռուսական կայսերական դեսպան Նէլիդօվ, յուլիսի 8-ին—Պէկինի դեսպան Կօրօստովեց:

Արդարադատութեան մինիստրը, Բարձրագոյն հաճութեամբ մի առժամանակ Պետերբուրգից հեռանալով՝ մինիստրութեան կառավարութիւնը իր բացակայութեան ժամանակ յանձնեց իր օգնական սենատօր Լիւցէին:

ՉԻԿԱԳՕ, Դաշնակցական դատարանը վերացրեց Լէնդիսի դատարանի որոշումը 1907 թւի օգոստոսի 3-ից, որով «Ստանդարտ-Օյլ» ընկերութիւնը դատապարտված էր 29 միլիօն դրամական տուգանքի, և որոշեց գործը վերաքննել:

ՀԱՄԲՈՒՐԳ, 10 յուլիսի: Կիլից «Ալմազ» կրէյսէրով ժամանեց մինիստրների խորհրդի նախագահ Ստոլիպին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Նոցին Կայսերական Մեծութիւնների ներկայութեամբ Պետերհօֆի Կայսերական թատրօնում յուլիսի 9-ին կայացաւ բարեգործական ներկայացում յօգուտ Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդօրօվնայի հովանաւորութեան ներքոյ գտնվող չքաւորներին օգնող պետերհօֆեան ընկերութեան:

Ամերիկական «Տօմաս» աւտօմօբիլը, որ մասնակցում է Նիւ-Եօրկ-Պարիզ արշաւին, եկաւ 4 ժամ 45 րօպէին աւտօմօբիլեան կլուբը և 6 ժամ 30 րօպէին շարունակեց իր ճանապարհը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 յուլիսի: Զինուորական նահանգական դատարանը աւարտեց 44 անձերի գործի քննութիւնը, որոնք մեղադրվում են սօցիալիստ-յեղափոխ.-մաքսիմալիստների կուսակցութեան պատկանելու մէջ: Ներկայ եղող 39 մեղադրվողներից դատարանը մեղաւոր ճանաչեց 32 հոգու և դատապարտեց նրանց տաժանակիր աշխատանքների զանազան ժամանակամիջոցով, որոնց թւում 6 հոգու՝ այն է իշխանուհի Միշէցկային, Ադամսօնին, Եմէլեանօվին, Կօշալկօւկին, Կացին և Զակրզէյմին 15 տարով, երեքին տասներկու տարով, տասին տասը տարով, հինգին ութ տարով, հինգին վեց տարով, մէկին հինգ տարով, երկուսին աքսորի, երկու մեղադրեալին դատարանը յանցաւոր գտաւ նրանում, որ նրանք չէին յայտնել իշխանութեանը: Մեղադրվածների մօտ գտնվող աւելի քան 8500 րուբլին դատարանը որոշեց տալ Ալէքսանդրովեան կօմիտէին:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Նուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և ներւային:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՆԴԻՆՈՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան:
Գ. Ե. ԳՈՒՐԳԻՆՕՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան:
ԵՐԵԿՕՆԵՐԸ
Ա. Ե. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինովսկայա փողոց № 8.
(ե. հ. շ.) 100—88

ԲԺԻՇԿ
Ա. Միքայէլեանց
Անցեալ տարիների նման ընդունում է հիւանդներին վեներական և մորթու ցաւերով Կիսլովոդսկում, հիւրանոց «Ռօսսիա»:
(ա. օ.) 100—81

ԲԺԻՇԿ
Ա. ՍԱՐԳՍԵԱՆՑ
Ընդունում է ամեն օր բացի կիրակի և տօն օրերից, երեկոյեան ժամը 6—7 ներքին և երեխայոց հիւանդութիւնների:
Великокняжеская № 69. (օ. մ.) 6—4

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Ընդունում է
Ներքին եւ ջղային
հիւանդութիւն ունեցողներին
Պեատիգորսկում, Վերխնի բուլվար № 14, տ. իշխ. Գիրէի. Пятигорскъ, Верхній бульваръ, д. кн. Гирей. 30—24

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ
ՅՈՎՍԷՓ
Մելիք-Ջհանեանցի
Церковная ул. д. № 11. (близъ памятника Воронцова)
Ընդունվում են աշակերտներ գիշերօթիկ և երթևեկ և պատրաստում են բոլոր միջնակարգ դպրոցների համար: Աւանդվում են ռուս., հայ, գերման, լատին և ֆրանսիական լեզուներ: Այդտեղ կազմակերպված են և խմբական պարապմունքներ միջնակարգ դպրոցների բարձր դասարաններ մտնել ցանկացողների համար: Առարկաներ աւանդելու համար հրաւիրված են մասնագէտ ուսուցիչներ: Ի միջի այլոց աւանդվում է և [illegible]:
(օ. մ.) 20—4

ՂԱԶԱՐՈՍ ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ
(Ջաւախեցի)
որ աւարտել է Ներսիսեան դպրոցը, ունի տասնչորս տարվայ ուսուցչական փորձառութիւն և վերջին տարիներս վարում էր Մօզդօկի հայոց դպրոցների տեսչի պաշտօնը,
Տեղ է որոնում հայոց դպրոցներում
Հասցէն՝ г. Ахалкалаки (Тиф. губ.), Лазарю Теръ-Григорянъ.

ՅՈՒԼԻՍԻՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ
Ստ. Լիսիցեանի, Յովհ. Թումանեանի եւ Լ. Շանթի
ԿԱԶՄԱԾ
ԼՈՒՍԱԲԵՐ
ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ
Երկրորդ տարի
Գինը 45 կ.
Գլխաւոր պահեստը՝ Թիֆլ.
Тифлисъ, книжный магазинъ „Гуттенбергъ"
(օ. մ.)
„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ"
Առաջին տարի
Գինը 30 կ.
գրավաճառանոցում
Բաքու՝ „Сотрудникъ"
10—8

ՀԻՒԱՆԴՆԵՐ
ընկնաւորութեամբ, աչքային ցնցումով, բարակացաւով, աստմայով, թոքերով, ստամոքսով և օնանականութեամբ, հաղորդեցէք ձեր հասցէն՝ ստանալու համար մասնագէտ բժիշկների խորհուրդը՝ նորագիւտ միջոցներով ճիշտ արմատական բժշկութեան մասին: Ներկայ յայտարարութիւնը խնդրում են չը խառնել ներկայումս երևան եկող հաքիմների յայտարարութիւնների հետ, որոնք բժշկականութեան հետ ոչինչ կապ չունեն: Պատասխանի համար կցել 4 եօթը կոպէկանոց մարկաներ: Հասցէ. СПБ. Почтамтъ Ящикъ № 215. (շ. կ.) (ապ.) 2—2

ՍԱՆԱՏՕԳԷՆ ԲԱՈՒԷՐ
Տալիս է
ՆՈՐ ՈՅԺԵՐ
7500-ից աւելի պրօֆեսօրներ և բժիշկներ տուին հրաշալի կարծիքներ Բաուէր սանատօգէնի մասին, իբր ամենայուսալի և ամրացնող միջոցի զանազան տեսակ հիւանդութիւնների ժամանակ:
Իսկականը միայն Բաուէր և ընկ. Ծախվում է բոլոր դեղատներում և դեղօրայքի մագազիններում: Բրօշիւրները ուղարկվում են ձրի: Московское отдѣленіе, Мясницкая ул., № 31.
(մ. 13, 24, յուն. 10, 28, յուլ. 12, 26, օգ. 9) (135,021) 7—4

Типографія „Экономія" Ав. Мугдусіакопова съ С-ми
Большая Ванкская ул. № 3.